 15 Աւրախացուր մեզ այն օրերուն չափովը որ արտաեւ,
 ցուցիր։
 Այն ասրբներուն շահուկ որ չսրբիք տեսանք։
 16 Թաղ երեւնայ քու գործդ քու ծառաներուուգ,
 Եւ քու փառքդ աննաց որդիներուն։
 17 Ու մեր Տէր Աստուծայն վայելչութիւնը մեր վրայ
 Ըլլայ։
 Եւ ձեռքելմառու գործը հաստատէ մեր վրայ։
 Մեր ձեռքերուն գործը հաստատէ։

ՍՈՂՄՈՒՍ Ղ.Օ.

- 1 Բարձրելցյն ծածկոցին առկ ընսկողը
 Ամենակարողին հովանուորութեանը առկ պիտի
 հանգչի։
 2 Տէրոջը համար պիտի լսեմ թէ իմ ապաւէնս ու իմ
 ամրոց է։
 Իմ Աստամձն՝ որու կը յուսամ։
 3 Սրդարեւ ան պիտի փրկէ քեզ սրարդին որոգոյթէն,
 Ապականչէ ժանառամոչէն։
 4 Քեզ իր փետուրներավը պիտի ծածկէ,
 Ու իր թեւերուն առկ պիտի ապաստանիս։

- Անոր ճշմարտութիւնը վահան մը ու ասպար մը պիտի
 ըլլայ ժեկ։
 5 Պիտի չվախնան գիշերուան զարհաւրանքէն,
 Ու ցորեկը թռչող նետէն,
 6 Ու աւ մութ տեղը պալսող ժանտամաշէն,
 Ու կէսօրուան ատեն սատակեցնող հարուածէն։
 7 Հազար հոգի քու քովէդ,
 Ու ասար հազար քու աջ կողմէդ պիտի իյնան,
 Բայց քեզի հարուած հը պիտի չմօտենայ։
 8 Միսյն քու աչքերովդ պիտի նայիս,
 Ու ամբորիշաներուն հաստուցումը պիտի տեսնես։
 9 Որովհէտեւ գուն Տէրը, իմ Ապաւէնս,
 Բարձրեալը քեզի ապաստանարան ըրիր,
 10 Քեզի չարկիք պիտի չչասնի,
 Եւ քու բնակրանիդ հասուած մը պիտի չմօտենայ։
 11 Վասն զի իր հրեշտակներուն պիտի սպազրէ քեզի
 համար,
 Որ քու բոլոր ճամբաներուուգ մէջ քեզ պահէն,
 12 Անոնք ձեռքերնաւն վրայ պիտի վերցնեն քեզւ,
 Որ չըլլայ թէ սաքդ քարի զարնես։
 13 Առիւծի ու իիի վրայ պիտի քալես։
 Առիւծի կորինը ու վիշտավը պիտի կոփկուտես։
 14 Որովհէտեւ ինծի կը ցանկայ,
 Անոր համար ես պիտի փրկեմ զանիկա։
 Անոր ամբաթիւն պիտի ըլլամ՝
 Վասն զի անիկա իմ անտւն գիտցաւ։
 15 Ինծի պիտի կոնչէ, ու ես անոր պատասխան պիտի
 տասմ։
 Կեղութեսն մէջ անոր հետ պիտի ըլլամ։
 Պիտի ապրեցնեմ ու փառաւորեմ զանիկա։

16 Երկայն օրերով պիտի կշատրված գտնիկա,
Ու իմ փրկութիւնս անոր պիտի ցուցնեմ:

ՍԱՂՄՈՍ ԴԲ

Շաբաթ օրուան համար Սաղմոս ու երգ:

- 1 **Բ**արի է գոչանալ Տէրոջմէն,
Ու սաղմոս լսել քու անուանդ, ով Բարձրեալ.
- 2 Յաւտուանց քու ողբարութիւնդ,
Ու գիշերը քու հաւատարմանթիւնդ պատմել
- 3 Տարը լսր ունեցող նուռագարանավ ու տաւիզով
Եւ քնարի ձոյնավ:
- 4 Վասն զի գուն, ով Տէր, քու գործովդ զիս ուրախու-
ցոցիլ.
- 5 Ուու ձեռքերուդ գործերովը պիտի ցնծամ:
- 6 Ով Տէր, ինչ մեծ են քու գործերդ.
Հաս խորսնէն են քու խորհուրդներդ:
- 7 Անմիտ մարդը ասիկա չիմոնար,
Ու յիմարը չհասկնար:
- 8 Ամբարիշտներուն խոսի պէս բուռնիլլ
Ու բարու անօրէնութիւն գործողներուն ծաղկիլ
Իրենց յաւիտենակոմն կորուստին և բանի:
- 9 Բայց գուն, ով Տէր, յաւիտեան բարձր ես:
Վասն զի ահա քու թշնամիներդ, ով Տէր,
- 10 Վասն զի ահա քու թշնամիներդ պիտի կորուստին.
Բոլոր անօրէնութիւն գործողները պիտի ցրուին:
Բայց իմ եղջիւրա միեղջերունին պէս պիտի բարձ-
րացնես.
- 11 Ես իմ աշքերս թշնամիներուս իշխուարը պիտի տեսնեն.

- 11 Իմ ականջներս ինծի դէմ ելլող չարագործներուն
իրած պատիք պիտի լսեն:
- 12 Արքարը արմատենի պէս պիտի ծաղկի,
Կելանանի եղեւինի պէս պիտի մեծնոյ:
- 13 Տէրոջը ասանը մէջ անկուտածները
Միր Աստուծյն սրահներուն մէջ պիտի ծաղկին.
- 14 Ծերագութեան ատեն ալ պատուղ պիտի ատեն,
Պարարա ու կանանչ պիտի մնան,
- 15 Որպէս զի պատմեն թէ Տէրը ուղիղ է.
Անիկոս իմ Վէճմն է, ու անիրաւութիւն չկայ անոր
քավ:

ՍԱՂՄՈՍ ԴԳ

- 1 **Տ**էրը կըթագաւորէ, մեծափառութիւն հագած է.
Տէրը զօրութիւն հագած ու գօտեւորած է.
Աշխարհ ալ հաստատուած է որպէս զի չսասանի:
- 2 Քու աթուգ իրեն ժամանակէն հաստատ է.
Ի յաւիտենից ես գուն:
- 3 Ով Տէր, գետերը բարձրացուցին,
Գետերը բարձրացուցին իրենց ձոյնը.
Գետերը կը բարձրացնին իրենց շառաչիւնը:
- 4 Հաս զուրիերուն ծայնէն ու ծովուն զօրաւոր ալիք
ներէն:
- 5 Աւելի զօրաւոր է Տէրը բարձրութեան մէջ:
6 Քու վկայութիւններդ շատ հաւատարիմ են.
Ով Տէր, որբութիւնը քու տանդ կը վայլէ յաւիտեան:

ՍՍ.Ղ.ՄՈՍ Ղ.Դ

- 1 Ով Տէր, զիքժինդրութեանց Աստուած,
Ով զիքժինդրութեանց Աստուած, յայտնուէ:
- 2 Եղիր, ով երկիր Դաստաւորը,
Ամբալաւաւաններուն հատուաւմը ըրէ:
- 3 Ով Տէր, մինչև ե՞րբ ամբարիշտները,
Մինչև ե՞րբ ամբարիշտները պարծենան.
- 4 Գուղութեամի բարբառելով խօսին,
Ու բոլոր անօրէնութիւն գործովները պարծենան:
- 5 Ով Տէր, անոնք քու ժողովուրդդ կը հարասահարեն,
Ու քու ժառանգութիւնդ կը շարչարեն.
- 6 Որբեւարին ու պանդուխարը կը պաննեն,
Եւ որբերը կը մեռցնեն.
- 7 Ու կ'ըսեն, Տէրը չաեսներ,
Եւ Ցակոսի Աստուածը շիմանար:
- 8 Իմացէք, ով ժողովուրդին անմիտները,
Ու դուք, ով յիմալիներ, ե՞րբ միտք պիտի առնեք:
- 9 Միթէ ականջը անկողը չ'լսեր,
Կամ թէ աչքը սաեկծողը չ'լսեսներ:
- 10 Միթէ աղբերը երաստողը չ'յանդիմներ.
Միթէ մարդու գիտութիւն արդիցնողը և է էրեւ:
- 11 Տէրը մարդոց խորհուրդները գիտէ
Որ ունայնութիւն են:
- 12 Երանի՛ այն մարդուն զոր դուն կը խրատես, ով
Տէր,
Եւ քու օրէնքէդ անսր կը սորվեցնես,
- 13 Որպէս զի չարութեան օրերուն մէջ զանիկա հանգ-
չեցնես,
Մինչև որ ամբարշտին համար հոր փորուի:

ԳԻՒՐՔ ՍՍ.Ղ.ՄՈՍԱՅ

153

- 14 Վասն զի Տէրը իր ժողովուրդը երեսէ պիտի չձգէ,
Ու իր ժառանգութիւնը պիտի չմերժէ.
- 15 Հապա գաստաստանը իրաւունքի պիտի գաւանոյ,
Ու ամէն սրտով ուղղիցները անոր ետեւէն պիտի եր-
թան:
- 16 Ո՞վ ինձի համար չարերու դէմ՝ պիտի ելլէ,
Ո՞վ ինձի համար անօրէնութիւն գործողներուն դէմ՝
պիտի կոյնի:
- 17 Եթէ Տէրը ինձի օգնական չըլլար,
Քիչ պիտի մասը որ իմ անձս լըսութեան դէլ լնակէր:
- 18 Երը կ'ըսէի թէ իմ ոտքս կը սասանի,
Ով Տէր, քու ժողովութիւնդ զիս կը հաստատէր:
- 19 Խմ' ներսիդին հսդերուս շատցած ասեննը՝
Քու միիթարսութիւններդ իմ անձս կ'ուրախացնէին:
- 20 Միթէ քեզի հետ հաղորդակցութիւն ունի՝ անօ-
րէնութեան աթոռը,
Որ օրէնքին դէմ՝ չարիք կը պատրաստէ:
- 21 Արդարին անձին դէմ՝ կը ժողվուին,
Ու անմեղ արիւնը կը դատապարտէն:
- 22 Բայց Տէրը իմ ամրութիւնս է,
Ու իմ Աստուածո՞ւ իմ ապաւենութեանս վէմը.
- 23 Եւ անոնց անօրէնութիւնը իրենց վրայ պիտի դարձնէ,
Ու զանոնք իրենց չարութիւնովը պիտի ջնջէ.
Մեր Տէր Աստուածը պիտի ջնջէ զանոնք:

ՍՍ.Ղ.ՄՈՍ Ղ.Ե

- 1 **Եկէք ցնծութիւն ընենք Տէրոջը առջև։**
Աղաղակենք մեր փրկութեան Վ.Եմին։
-
- Կամ, իր առհմանոց օրէնքովը

- 2 Գոհաթիւնով անոր երեսին առջև գտնեց
Սաղմոններով աղաղակենք անոր:
- 3 Վասն զի Տէրը մեծ Աստուած է,
Ու բոլոր աստուածներուն վրայ մեծ Թագաւոր է:
- 4 Անոր ձեռքին մէջ են երկիր խորունկ աեղերը:
Ու լեռներուն *բարձրութիւնները անորն են:
- 5 Իրն է ծովը, ու ինք շնորհ զանիկու.
Եւ իր ձեռքերը ստեղծեցին ցամաքը:
- 6 Եկեք երկրպագութիւն ընենք ու ծովնք.
Մունկ կրկնենք մեզ ստեղծող Տէրոջը առջև.
- 7 Վասն զի ան է մեր Աստուածը,
Ու մենք անոր արօտին ժողովուրդը և անոր ձեռքին
ոչխարներն ենք.
- Այսօր եթէ անոր ձոյնին պիտի լսէք,
- 8 Զեր սիրաերը մի խստացնեք լնչպէս Մերիպացի մէջ՝
Անսպասին մէջ փորձութեան օրուանը պէս,
- 9 Ուր ձեր հայրերը զիս փորձեցին,
Քննեցին զիս ու իմ գործերս տեսան:
- 10 Քառասուն տարի զգաւեցայ այս աղբէն,
Ու ըստ, Ոնոնք սրտով մոլորած ժողովուրդ ողն են,
Իմ ճամբաններս չմանցոն:
- 11 Ուստի իմ բարկութեանս մէջ երգում ըրի,
Թէ անոնք իմ հանգիստ պիտի չմանեն,

ՍԱՂՄՈՍ Դ.9

- 1 Նոր երգ երգեցէք Տէրոջը.
Ով բոլոր երկիր, երգեցէք Տէրոջը,
- 2 Երգեցէք Տէրոջը, օրհնեցէք անոր անունը.
*Կամ, զօրութիւնները

- Օրէ օր անոր փրկութիւնը քարտղեցէք:
- 3 Անոր փառքը աղբերուն մէջ պատմեցէք,
Ու անոր հրաշքները՝ բոլոր ժողովարդներուն մէջ.
- 4 Բանզի Տէրը մեծ է ու խիստ գովելի.
- Անիկոս բոլոր աստուածներուն վրայ ահաւոր է:
- 5 Վասն զի աղբերուն բոլոր աստուածները *կուռ-
քեր են.
- Բայց Ե՛օվա երկինքը ստեղծեց:
- 6 Փառք ու վայելլութիւն կոյ անոր առջև,
Զօրութիւն ու գեղեցկութիւն՝ անոր սրբարանին մէջ:
- 7 Տէրոջը տուէք, ով ժողովրդոց առջմերը,
Տէրոջը տուէք փառք ու զօրութիւն:
- 8 Տէրոջը տուէք իր անսւանը փառք.
- Ընծայ տուէք ու անոր սրուշներուն մէջ մուէք.
- 9 +Մուրը հանդէսավ՝ Տէրոջը երկրպագութիւն ըրէք.
Վախցէք անոր երեսէն, ով բոլոր երկիր:
- 10 Հեթանոններուն մէջ ըսէք թէ Տէրը կը թագաւորէ.
Աշխարհ ալ հասասատուած է որպէս զի չսասանի.
Անիկաս պիտի դատէ ժողովարդները ուղղութիւնով:
- 11 Երկինք թող ուրախանայ ու երկիր ցնծոյ.
- Ծովը իր լիութիւնով թող գուայ.
- 12 Դաշտուն բոլոր անոր մէջ երզողները թող ուրախանան.
Այս ատեն անսատափն բոլոր ծառերը թող ցնծան
- 13 Տէրոջը առջև, վասն զի կու գոյ,
- Վասն զի կու գոյ երկիրը դասելու.
- Պիտի դատէ աշխարհը արդարութիւնով,
Ու ժողովարդները՝ իր Ճշմարտութիւնով.
- *Լամ, ունազնութիւններ
+Կամ, Արբութեան զարդարանքով

ՍԱՎԱՄՈՍ Դ.Բ.

- 1 Տէրը կը թագաւորէ, երկիր թռող ցնծոյ.
- 2 Եսոր բալրափաքը տմազ ու մասափուղ կայ,
- 3 Անոր առջեւէն կասկ կ'երթայ,
- 4 Անոր փայլակները աշխարհը կը լուսաւորէն.
- 5 Լեռները մամի պէս կը հային Եհովայի երեսէն,
- 6 Երկինք կը պատմէ անոր արդարութիւնը,
- 7 Թռող ամէնան պյն ամէնը որոնք կուռքերուն կը ծառացին,
- 8 Արօն լուեց և ուրախացաւ,
- 9 Վուգույի աղջիկները ցնծացին
- 10 Ու Տէրը սիրովներ, չարութիւնը ատեցէք.
- 11 Անհիս իր սուրբերուն անձերը կը պահէն,
- 12 Անհիս իր սուրբերուն ձեռքէն կը փրկէ զանոնք.
- 13 Արդարին համար լցոյ ցանուեցաւ,
- 14 Եւ օրտով ուղիղներուն համար՝ ուրախութիւն.

ՍԱՎԱՄՈՍ Դ.Բ.

Ասպմատ

- 1 Սէրոջմավ ուրախացէք, ով արդարներ,
Ու անոր սրբութիւնը յէւելով շնորհակալ եղէք:
- 2 Սէրը ցուցաց իր փրկութիւնը,
- 3 Յէւելուն առջև յայտնեց իր արդարութիւնը
- 4 Յէւել իր սղզբնութիւնը ու իր հաւասարմութիւնը
Խարութիւն պանը համար.
- 5 Երկիր ամէն ծայրեցը
- 6 Մէր Աստուծոյն փրկութիւնը տեսան:
- 7 Ենձացէք Տէրոջը առջև, ով բոլոր երկիր.
- 8 Ուրախութեան ձայնով աղաղակեցէք ու սորման
լուէք:
- 9 Ասղման երգեցէք Տէրոջը քնարով,
- 10 Քնարով ու սաղմափ ձայնով.
- 11 Փաղերով ու շեփորի ձայնով
- 12 Աղաղակեցէք Տէր Թագաւորին առջեւ.
- 13 Թռող գոռոյ ծովը ու անոր լիութիւնը,
- 14 Աշխարհ ու անոր բնակիչները:
- 15 Գետերը թռող ծափ զարնեն,
- 16 Տէր կաները մէկտեղ թռող ցնծ ան
- 17 Տէրոջը առջև, վասն զի կու գոյ երկիրը դատելու.

+կամ, յաղթութիւն

Անիկա պիտի գտառէ աշխարհը արդարութիւնով,
Ու ժողովուրդները՝ սողութիւնով։

ՍԱՂՄՈՍ ԴԹ

- 1 **Տէրը կը թագաւորէ,** ժողովուրդները թող ասր
սափին։
Ինք քերովբէներսւն վրայ կը նատի, երկիր թող շարժի
- 2 **Տէրը մեծ է Սիօնի մէջ,**
Ու բարձրացած է բարձր ժողովուրդներսւն վրայ։
- 3 **Թող գովին քու մեծ ու ահաւոր անսւնդ.**
Անիկա սուրբ է։
- 4 **Եւ *թագաւորին զօրութիւնը իրաւունք կը սիրէ.**
Ու զղութիւն հաստանեցիր,
Իրաւունք ու արդարութիւն ըրիր Ցակորի մէջ։
- 5 **Բարձրացուցէք Տէրը, մեր Աստուածը,**
Ու երկրագութիւն ըրէք անոր սոտերուն պատառաւ
գանին։
- 6 **Անիկա սուրբ է։**
Մովսէս ու Աճարոն անոր քահանաներուն մէջ,
Եւ Ասմաւէլ անոր անունը կոնչողներուն մէջ
Տէրոջը Կ'աղաղակէին,
Ու անիկա պատասխան կու տար անոնց։
- 7 **Ամպի միւնին մէջէն կը խօսէր անոնց հետ.**
Անոնք կը պահէին անոնց վկացութիւնները,
Ու այն հրամաննը զբ իրենց տուաւ։
- 8 **Ով Տէր, մեր Աստուածը, գուն կը լսէիր անոնց.**
Դուն անոնց ներող Աստուած էիր,

*Լամ, դուն, ով իրաւասէր զօրաւոր թագաւոր

Թէպէտ վրէժինդիր եղար անոնց գործերուն;
9 Բարձրացուցէք Տէրը, մեր Աստուածը,
Ու երկրագութիւնը ըրէք անոր սուրբ լեռունը վրայ։
Վասն զի Տէրը, մեր Աստուածը, սուրբ է։

ՍԱՂՄՈՍ Ճ

Գոհութեան Սաղմոս։

- 1 **Անլաղակցէք Տէրոջը, ով բոլոր երկիր,**
- 2 **Վասույեցէք Տէրոջը ուրախութեամբ.**
Անոր սաշնկ եկէք ցնծութեամբ։
- 3 **Ճանչցէք որ ԵՀովա է Աստուած.**
Անիկա սուեղեց մեղ, ու *ոչ թէ մենք։
- 4 **Մատէք անոր գաները գոհութեամբ,**
Ու անոր սրահները՝ օրջնութեամբ։
Գոհացէք անկէ ու օրջնուցէք անոր անունը։
- 5 **Վասն զի Տէրը բարի է.**
Անոր ողբանութիւնը յաւիտեան է,
Ու անոր հաւասարմութիւնը աղդէ մինչեւ աղդ։

ՍԱՂՄՈՍ ՃԱ

Սողուն Գաւթի։

- 1 **Ոլորմութիւն ու իրաւունք պիտի երգեմ.**
Ով Տէր, քեզի սուլմոս պիտի ըսեմ։
- 2 **Խմասառութիւնով պիտի քալեմ կաստարելութեան**
ճամբառն մէջ։

*Լամ, մենք անորն ենք

- Ե՞րբ ինծի պիտի գաս,
Իմ տանո մեջ պահս կատարելութիւնովը պիտի վար-
սեմ:
- 3 Աչքերուս առջեւ չար բան մը պիտի չդնեմ.
Մարզաններուն գործը կ'ատեմ,
Թուղ անիկս ինծի չփակչի:
4 Ծուռ սիրով թող զատուի ինծմէ.
Չարը պիտի չճանչում:
5 Ան որ ծածուկ կը խօսի իր ընկերին դէմ, պիտի ջնջեմ.
Ան որ աչքերով բարձր է ու սրավ ամիւրտաւան,
Անոր պիտի չչամեկերեմ:
6 Իմ աչքերս երկրի հաւասարիներուն վրայ պիտի
ըլլան,
Որպէս զի ինծի հետ բնակին.
Կատարելութեան ճամբուն մեջ քալողը
ինծի ծաւայութիւն պիտի ընէ:
7 Կանգաւարը պիտի չնավի իմ առնա մէջ.
Սուռ խօսողը աչքերուս առջեւ պիտի չչատասուի:
8 Առտունանց կանուխ պիտի ջնջեմ երկրին բոլոր ամ-
բարիշաները,
Որպէս զի Տէրոջը քաղուքէն բոլոր անօրէնութիւն
գործողները կորանցնեմ:

ՍՅԱԼՄՈՍՍ ՃԲ

- Վաշտալիին աղօթքը՝ երբ սէրոց կը մարի ու եր գանդառը
Տէրոյն առջեւ կը թափէն
1 Ու կը լու աղապակս թող քեզի հասնի
2 Քու երեսդ մի ծածկեր ինծմէ իմ նեղութեան օրը.

- Խոնարհեցուը ինծի քու ականջդ.
Շուտով պատասխան տուր ինծի այս օրը որ + Եզ-
կանչեմ:
- 3 Վասն զի իմ՝ օրերս մնելիի պէս փճացան,
Եւ իմ ոսկորներս խուրւի պէս այլեցան:
4 Սիրոս զարնուեցաւ ու խոսի պէս չպցաւ,
Այնպէս որ իմ հայոս ուտելու մնուցայ:
5 Հասաւանքիս ձայնէն
Ոսկորներս մորմինիս փական:
6 Անսպատին մշջի հաւալսարին նմանեցայ,
Աւերակներուն բուին պէս եղայ:
7 Անքուն մնացի, ու նման եղայ
Տանիքին վրայ մինակ եղաղ ճնճղուկին:
8 Ամէն օր իմ թշնամիներս զիս կը նախատեն,
Իմ՝ վրաս սաստիկ բարկացողները ինծի դէմ երգում
կ'ընեն:
- 9 Վասն զի մնիթը հացի պէս կերայ,
Ու խմելիքս արցունքով խաւանեցի
10 Քու բարկութեանդ ու պամասութեանդ համոր,
Վասն զի զիս վերցուցիր ու նետեցիր:
11 Իմ՝ օրերս երկնցած սոսուերի պէս եղան,
Ու ես խոսի պէս չպցայ:
12 Բայց գուն, ով Տէր, յաւիտեան կը կենաս,
Եւ քու յիշտատիդ աղգէ մինչեւ ազդ:
13 Դուն պիտի ելլես ու Սիօնի ողորմին,
Վասն զի ժամնանակ է անոր ողորմելու,
Քանդի որոշուած ժամնանակը հասաւ:
14 Վասն զի քու ծառաներդ անոր քարերուն կը հաւանին,
Ու անոր հողին կը դժան:
15 Եւ հեթանոսները պիտի վարինան Տէրոջը անունէն,

- Ու երկիր բոլը թագաւորները՝ քու փառքէդ։
 16 Վասն զի Տէրը պիտի շինէ Սիօնը.
 Եր փառքովը պիտի երեւնայ։
 17 Տնանկներուն աղօթքը մտիկ պիտի ընէ,
 Ու անոնց աղօթքը պիտի չանագէ։
 18 Այս պիտի գալու աղգին համար.
 Ու սաեղծուելու ժողովուրդը Տէրոջը գոհութիւն
 պիտի ասոյ։
 19 Վասն զի իր սրբութեանը բարձրութենէն հայեցաւ.
 Տէրը երկինք երկիր վասյ նայեցաւ։
 20 Որպէս զի կապուածնին հառաջանկը լսէ,
 Ու մահու սրբները արձակէ։
 21 Որպէս զի Սիօնի մէջ Տէրոջը անաւնը պատմէն։
 Ու անոր գովութիւնը՝ Երաւանդէմի մէջ,
 22 Երբ ժողովուրդները մէկաեղ ժողովուին,
 Ու թագաւորութիւնները՝ Տէրոջը ծառայելու հա-
 մոր։
 23 Անիկա զօրութիւնս տկարացուց ճամփուն մէջ,
 Ու իմ օրերս կարճցուց։
 24 Ես ըսի, ալ իմ Աստուածս,
 Խմ օրերսս կէսին մէջ զիս մի վերցներ։
 Քու տարիներդ ազգէ մինչեւ ազգ են։
 25 Ազիրէն երկիր հիմերը դրիմ,
 Բւ երկինք քու ձեռքերութ դրծն է։
 26 Անմաք պիտի կորսուին, բայց գուն պիտի կենսա-
 Ու անոնց ամենը լաթի պէս պիտի մաշխն
 Հանդերձի պէս պիտի փոխես զանոնք,
 Ու պիտի փոխուին։
 27 Բայց գուն նոյն ինքն ես,
 Եւ քու տարիներդ պիտի չվերջանան։

- 28 Քու ծառաներութ որդիները պիտի բնակին,
 Ու անոնց սերունդը հաստատ պիտի մասյ քու առջեւդ։

ՍԱՀՄՈՍ ՃԴ

Սահման Դաւթիւ

- 1 Ով իմ անձս, օրչնէ Տէրը,
 Ու այն ամենը որ իմ ներսիդիս է՝ անոր սուրբ անունը
 2 Ով իմ անձս, օրչնէ Տէրը,
 Եւ անոր բոլը ապրելապութիւնները մի մանափ,
 3 Որ կը քաւէ բոլը անօրէնութիւններդ,
 Ու կը բժշկէ քու բոլը հիւանդութիւններդ։
 4 Որ կը քրիէ քու կեանքդ տպականութենէ,
 Եւ կը պատկէ քեզ ողորմութիւնով ու գթութիւնով,
 5 Որ կը լեցնէ քու ծերութիւնով բարսութիւնով,
 Ու քու մանկութիւնդ արծիւին պէս կը նարսուի,
 6 Տէրը արդարութիւններ ու իրաւունքներ կ'ինէ
 Բոլը զիկուածներուն։
 7 Անիկա իր ճամփաները Մովուէսի ճանցցուց,
 Ու իր գործերը՝ Խարոյէլի որդիներուն։
 8 Բարեգութ ու ողորմութիւնով Տէրը,
 Երկայնամիտ ու աւատ՝ ողորմութիւնով։
 9 Անիկա մինչեւ վերջը չչակառակիր,
 Եւ յաւիտեան մի չպահէրը։
 10 Անիկա մեր մեղքերուն համեմատ չըրաւ մեղի,
 Ու մեր անօրէնութիւններուն համեմատ հասառցում
 չըրաւ մեղի։
 11 Հապս որչափ որ երկինք երկիր բարձր է,
 Այնա՛ իր ողորմութիւնը իրմէ վախցողներուն վրայ
 զըրաւոր է։

- 12 Որչափ որ արեւելքը արեւմնատպէն հեռու է,
Այստեւ հեռացաց մեղմէ մեր յանցանկները։
- 13 Խնչպէս հայր մը կը գթայ էր սրբիներուն վրայ,
Այսպէս Տէրը կը գթայ իրմէ վախցոյներուն վրայ։
- 14 Վասն զի ան գիտէ մեր կաղմաւածքը,
Կը յիշէ որ մենք հող ենք։
- 15 Մարդուն օրերը խստի պէս են.
Խնչպէս դաշտի ծաղիկը, աշնապէս կը ծաղկի։
- 16 Վասնզի հովանոր վրայէն կ'անցնի ու ան կ'ոչնչանայ,
Եւ ալ անոր տեղը չձննչնար զանիկա։
- 17 Բայց Տէրոջը ողորմութիւնը յաւիտեան յաւիտեանից
իրմէ վախցողներուն վրայ է,
Ու անոր արգարութիւնը՝ որդեւոց սրբիներու վրայ։
- 18 Անոնց կը այ է՝ որոնք կը պահէն անոր ուժատը,
Եւ կը յիշեն անոր պատուիրաները ու կը կատարեն։
- 19 Տէրը իր աթոռուերկինքի մէջ հաստատեց.
Ու անոր թագաւորութիւնը անշնուն վրայ կը ակրէ։
- 20 Օրչնեցէք Տէրը, ով անոր հրեշտակները, որ ուժով
զօրաւոր էք,
Որ անոր խօսին ձայնը լսելով՝ իր հրամանը կը կա-
տարէք։
- 21 Օրչնեցէք Տէրը, ով անոր բոլոր զօրքերը,
Անոր կամքը կատարող պաշտօնեաները։
- 22 Օրչնեցէք Տէրը, ով անոր բոլոր գործերը,
Անոր տէրութեանը ամէն տեղերուն մէջ։
Օրչնէ Տէրը, ով իմ անձա

- ### ՍԱՂՄՈՍ ՃԴ
- 1 Օրչնէ Տէրը, ով իմ անձա.
Ով Տէր, իմ Աստաւածո, գուն խիստ մեծ ես.
Փառք ու վայելչութիւն հաղած ես.
- 2 Լոյս հանդերձի պէս կը հագնիս,
Երկինքը վարագոյրի պէս կը ասպածեա.
- 3 Անիկա իր վերնաստունները ջուրերուն վրայ կը շինէ.
Անկերը իրեն կառք կ'ընէ,
Հովին թեւերուն վրայ կը պալոտի։
- 4 Իր հրեշտակները հոգիներ կ'ընէ,
Ու իր պաշտօնեանները՝ կրակի բոց։
- 5 Անիկա հաստատեց երկիրը իր հիմերուն վրայ,
Որպէս զի յաւիտեան յաւիտենից չխափախ։
- 6 Զանիկա անդունդավ ծածկեցիր իբր թէ հանդերձալ.
Ջուրերը լեռներուն վրայ կոյնեցան.
- 7 Քու սասակելէք փախան.
Քու որտամունքիդ ձայնէն արտարալով փախան.
- 8 Լեռներուն վրայ ելան ու հովիսներուն մէջ իջան,
Այն տեղը զար դուն հաստատեցիր անոնց համար.
- 9 Սահման դրիր որպէս զի չանցնին,
Ու նորէն երկիրը չժածկին։
- 10 Զորերուն մէջ ազրիւրներ կը զրկէ.
Զորերը լեռներուն մէջէն կ'երթան։
- 11 Անոնք բոլոր դաշտի գաղաններուն կը խմցնեն.
Ու վայրի էշերը իրենց ծարաւութիւնը կ'անցնեն։
- 12 Անոնց քով երկինքի թուշունները կը բնակին,
Ուսերուն մէջէն ձայն կու տան։
- 13 Անիկա իր վերնաստուններէն լեռները կը ջրէ.
Քու գործերուդ պատուղէն երկիր կը կշտանայ։

- 14 Անիկաս անսասաններուն համար խստ կը բուացնէ,
Ու մարդուն ծառապատճեան համար՝ լոյս,
Որպէս զի կերակուր հանէ երկրէ,
15 Ու գինի՞ ո՞ր կ'ուրախացնէ մարդուն սիրալ,
Եւ՝ *իւղ՝ որ անոր երեսը կը փայլեցնէ,
Ու հայ՞ ո՞ր կը հաստատէ մարդուն սիրալ
16 Տէրոջը ծառերը կուշտ են,
Լիքաննին եղեւինները՝ զարոնք ինք անկեց:
17 Հոն թւաշունները բայներնին կը շննեն,
Ու արագիլին բնակարանը մայրերուն վրայ է:
18 Բարձր լեռները այժեւամիներուն տպաւէն են,
Ու վէմերը՝ ճագաբններուն:
19 Ժամանակներու համար լուսնը ստեղծեց,
Արեգակը իր մարզ մոննելը կը ճանչնայ:
20 Խառարը կը դնես ու գիշեր կ'ըլլայ,
Որուն մէջ անտառին բարս գաղանները կը պարտին:
21 Առիւծներուն կոփենները կը մենչեն յափշտակու-
թեան համար,
Ու Աստուծմէ իրենց կերակուրը կը ինդրէն.
22 Արեգուկին ծագելան պէս կը ժաղվուին:
Եւ իրենց որդերուն մէջ կը պատուին:
23 Մարդ մինչեւ իրիկուն իր գործին
Ու իր ժառապատճեանը կ'երթայ:
24 Ով Տէր, ո՞չչափ շատ են քառ գործերդ,
Անոնց բոլըը իմաստութիւննվ ըբիր.
Երկիր լցուած է քառ տառեղծածներովդ:
25 Այս ժողը մեծ ու լցին է,

*Եբը. իւղէն, վար, իւղէն առելք
†կամ, ստոցուածքներովդ

- Հոն անկթիւ սաղացողներ,
Պղտղիկ ու մեծ կենդանիներ, կան:
26 Հոն նաւերը կը քալեն,
Ու Լեւիաթ ան՝ զըր անոնց մէջ խաղալու համար
սաեղջեցիր:
27 Անոնց ամէնը քեզի կը սպասեն,
Որպէս զի իրենց կերակուրը ժամանակին տասա
28 Դուն անոնց կուտ ասա ու անոնք կը ժողվեն.
Զեւքք կը բանաս ու բարութիւնով կը կշտանան:
29 Երբ քաւ երեսու կը ծած կես՝ կը խուզվին.
Երբ անոնց հօգին կ'առնես՝ կը մեռնին
Եւ իրենց հօզը կը դասնան:
30 Հոտեր կը զգիսն ու անոնք կը ստեղծուին,
Ու երկրի երեսը կը նորսգես:
31 Տէրոջը փառքը յաւիտեան ըլլայ.
Տէրը իր գործերուն վրայ ուրախանայ:
32 Երկրի վրայ կը նայի ու այն կը դողայ.
Լեւներուն կը դպչի և անոնք կը միան:
33 Տէրոջը պիտի երգեմ իմ՝ կեանքիս մէջ.
Սազմա պիտի լսեմ իմ՝ Աստուծոյս՝ քանի որ աղջ եմ:
34 Անոր վրայով իմ՝ մատածութիւնս քաղցր պիտի ըլլայ.
Ես Տէրոջնավ պիտի ուրախանամ:
35 Մեղաստղները աշխարհէ թող պակսին,
Ու ամերարեշները ոչնչանամ:
Օրհնէ Տէրը, ով իմ անձու: *Ալէլուիս:

*Ալաբամա, Տէրը օրհնեցէք

ՍԱՂՄՈՍ ՃԵ

- 1 Գոհացեք Տէրոջմէն, անոր անունը կոմչեցեք,
Անոր գործերը ժողվարբէներուն մէջ պատմեցեք:
- 2 Երգեցեք անոր, սազման ըսէք անոր,
Պատմեցեք անոր ըսլոր հրաշքները:
- 3 Անոր սուրբ անունովը պարծենցէք.
- 4 Տէրը ու անոր զօրաթիւնը ինդրեցեք,
- Ամէն ժամանակ անոր երեսը փնտուեցեք.
- 5 Ցիշեցեք անոր ըսած հրաշքները,
Անոր նշանները ու բերնին դատաստանները,
- 6 Ով անոր ծառային Արքահամի սերունդը,
Ով Ցակոսի սորբիներ, անոր ընտրեալները:
- 7 Եհովս ինքն է մեր Աստուածը.
- Անոր դատաստանները ըսլոր երկրի մէջ են:
- 8 Անիկոս իր ուխտը յաւիտեան կը յիշէ,
Ու իր պատուիրած խօսքը՝ մինչև հազար տղդ.
- 9 Այն ուրբա զօր Արքահամի չետ ըստու,
Ու իր երգումը չը Խասհակի ըստու.
- 10 Ցակորի ալ հաստաեց զանիկա՝ օրէնք մը ըլլալու,
Ու Խարայէլի՛ էֆէւ յաւիտեանական ուխտ մը,
- 11 Ըսելով, Քեզի պիտի տամ Գանանու երկրը,
Չեր ժառանգութեան վիճակը.
- 12 Երբ անոնք սակաւաթիւ էին,
Քիշուոր ու պանդուխո՝ անոր մէջ,
- 13 Ու մէկ ազգէ ուրիշ ազգի գացին,
Մէկ թագաւորութենէ ուրիշ ժողովուրդի,
- 14 Անիկոս մէկո՛ւն թող չսուսաւ որ զանոնք նեղէ.
Թագաւորներ ալ յանդիմանեց անոնց համար,

- 15 Հուելու, իմ օձեղաներուս մի դպչիք,
Ու իմ մարգարէներուս շաղութիւն մի ընէք:
- 16 Ու առվ կանչեց երկրին վրայ.
- Հացին բոլոր զօրութիւնը կսարեց:
- 17 Անոնց առջեւեն մարդ դրկեց,
Ցալմէփի՛ որ ծառայութեան ծախուեցաւ:
- 18 Անոր սովերը կսպանեցով նեղեցին.
Անոր անձը երկաթի մէջ դրաւեցաւ:
- 19 Մինչեւ այն ժամանակ որ անոր խօսքը եկաւ,
Տէրոջը խօսքը փորձեց զանիկա:
- 20 Թողաւորը զրկեց ու արձակեց զանիկա,
Ժողովուրդներուն իշխանը ազատեց զանիկա:
- 21 Իր տակն վրայ աէր կեցուց զանիկա,
Եւ իր բոլոր ունեցածին վրայ իշխառ.
- 22 Որպէս զի անոր իշխանները իր ուղածին պէս կազէ,
Ու անոր ծերերը իմաստուն ընէ:
- 23 Եւ Խորայէլ Եգիպտոս եկաւ,
Ու Յակոբ պանդուխո եղու Քամի երկրին մէջ:
- 24 Եւ Տէրը իր ժողովուրդը խիստ շասցուց,
Ու զանոնք իրենց թշնամիներէն աւելի զօրաւոր ըրաւ:
- 25 Անոնց սիրաը * դարձուց, որպէս զի իր ժողովուրդը
տառն,
- Ու իր ծառաներուն նէնդութիւն ընեն:
- 26 Իր ծառան Մովսէսը դրկեց,
Եւ իր ընարած Ահարոնը.
- 27 Ունա՞ւ անոնց մէջ իր նշանները ըրին,
Ու հրաշքներ՝ Քամի երկրին մէջ:
- 28 Խուսար զրկեց ու խաւարեցուց.

*կամ, դարձու

- Եւ անոր խօսքին դէմ չկեցան
 29 Անոնց ջուրեղը արիւնի գարձաց,
 Ու անոնց ձուկերը՝ սպաննեց։
 30 Անոնց երկրը առատօրէն գարտեր գուլս լերաւ՝
 Միւշ անոնց թագաւորներուն ներքին սենեակներուն
 մէջ։
 31 Բառաւ, ու շանաձանձը և մուները
 Անոնց բոլոր սահմաններուն մէջ եկան։
 32 Անձրեւի տեղ կարփւտ տուռաւ անոնց,
 Ու կրակի բոցեր՝ անոնց երկրին մէջ։
 33 Անոնց որթ երը ու թղենիները զարկաւ,
 Եւ անոնց սահմաններուն ծառերը կոտրաց։
 34 Բառաւ, ու եկաւ մարախը,
 Եւ ջորեակը՝ տաւանց համբանքի.
 35 Ու անոնց երկրին մէջի բոլոր խոսը կերան,
 Եւ անոնց արտերուն պատողը կերան։
 36 Անոնց երկրին մէջի բոլոր անդրանիկները
 Ու անոնց բոլոր զօրութեանը սկիզբը զարկաւ։
 37 Եւ զանօնք սոկիով ու տրծամթալ հանեց.
 Ու անոնց ցեղերուն մէջ տկար մարդ չկար։
 38 Եղիպատու արախացաւ անոնց դուռը ելելուն,
 Վասն զի անոնց ահը իրենց վասյ ինկած էր։
 39 Յուրեւ հովանի ըլլալու համար ամպը,
 Ու գեշերը լցոս տալու համար կրակը տարածեց։
 40 Խնդրեցին, ու լորամորգիներ բերաւ,
 Ու երկինքի հայով կշտացուց զանոնք։
 41 Վէմը պատուեց, ու ջուրերը վալուցին.
 Գետի պէս քալեցին չոր տեղերուն մէջ։
 42 Վասն զի իր սուրբ խօսքը յիշեց։
 Զոր իր Արքահամ ծառային հետ ըւեւ եւ։

- 43 Ու ժողովուրդը ցնծութիւնով հանեց,
 Եւ իր լնարածները՝ ուրախութիւնով։
 44 Ու հեթանոսներուն երկիները անոնց տուաւ.
 Եւ ժողովուրդներուն վաստակները ժառանգեցին
 անոնք։
 45 Որպէս զի անոր պատուիրաները պահեն,
 Ու անոր օրէնքները կատարեն Ալէլուիա։
- ՍԱՂՄՈՍ ՃԶ
- 1 Ալէլուիա Գոհացէք Տէրոջմէն, վասն զի բարի է,
 Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է։
 2 Ո՞վ պիտի պատմէ Տէրոջը մեծ գործերը.
 Ո՞վ պիտի իմացնէ անոր ամէն գովաւթիւնը։
 3 Երանի՛ անոնց որ իրաւունքը կը պահէն,
 Ու ամէն ժամանակ արդարութիւն կ'ընեն։
 4 Յիշէ զիս, ով Տէր, քու ժողովուրդիդ կ'ըս առեցան
 Հաճութեանք համեմատ,
 Ինձի այցելութիւն ըլէ քու փրկութիւնովդ.
 5 Որպէս զի քու լնարաւալներուդ բարութիւնը տեսնեմ,
 Քու ազգիդ ուրախութիւնովը ուրախանամ,
 Քու ժառանգութիւնովդ պարծենամ։
 6 Մենք մեր հայրերուն հետ մեղմնչեցինք.
 Անօրէնութիւն ըրինք, ամբարշտութիւն գործեցինք,
 7 Մեր հայրերը Եղիպատուի մէջ չիմացան քու հրաշք-
 ներդ,
 Զյիշեցին քու ողորմութեանդ շասութիւնը.
 Հասու ապաստամեցան ծավաւն քով,
 Կարմիր ծովուն քով։
 8 Բայց զանոնք իր անուանը համար փրկեց,

- Որպէս զի իր մեծ զօրութիւնը ճանչցնէ:
- 9 Եւ կարմիր ծավուն ասատեց, ու ցամքեցաւ.
- Ու անդունդներուն մէջն քալել առւաւ աննաց, իբ թէ անսպատին մէջն:
- 10 Եւ զանոնք փրկեց աստղին ձեռքէն,
- Ու ազատեց զանոնք թշնամին ձեռքէն:
- 11 Եւ ջուրերը անոնց թշնամիները ծածկեցին,
Անոնցմէ մէջ կը չմնաց:
- 12 Այն ասեն հաւասարցին անոր խօսին,
Եւ անոր օրհնութիւն երգեցին:
- 13 Շուտով մոռցան անոր գործերը,
Ու անոր իրատին չսպասեցին:
- 14 Եւ անսպատին մէջ խիստ ցանկացան,
Ու զիստուած փորձեցին անջուր տեղին մէջ:
- 15 Եւ անոնց առւաւ իրենց ուղածը,
Թիպէտե վասուժութիւն դրկեց անոնց անձերուն
վրայ:
- 16 Եւ Մովկէսի նոխանձեցան բանակին մէջ,
Ու Տէրոջ սուրբին, Աչարոնի:
- 17 Երկիր բացուեցաւ ու կլեց Դամթանը,
Ու Աբրոնի ժողովքը ծածկեց:
- 18 Եւ կրտկ բարբորեցաւ անոնց ժողովքին մէջ,
Բոցը այրեց ամբարիշտները:
- 19 Որմէ շինեցին Քորերի մէջ,
Ու երկրպագութիւն ըրին ճուլածոյ պատկերին:
- 20 Եւ իրենց Փառքը
Խոստակեր արջառու նմանութեանը փոխեցին:
- 21 Մոռցան իրենց քրիչ Աստուածը՝
Որ մեծամեծ գործեր ըրաւ Եղիպատի մէջ,
- 22 Ու հւաշքներ՝ Քամիր երկրին մէջ,

- Եւ ահաւոր բաներ՝ կարմիր ծավուն մէջ:
- 23 Ուստի ըստ որ զանոնք կրանցնէ,
Եթէ անոր ընտրեալլ Մովկէս
*Մէջտեղը անոր առջև կայնած չըլլար,
Անոր բարկութիւնը եւ դարձնելու համար, որպէս զի
շատակեցնէ:
- 24 Կուռե այս ցանկալի երկիրը անսորգեցին,
Ու անոր խօսին չհաւասարցին:
- 25 Եւ իրենց վատններուն մէջ արտնջեցին,
Տէրոջը ձայնը վայեցին:
- 26 Ուստի անոնց համար իերդում՝ ըրաւ
Որ զանոնք անսպատին մէջ ձգէ,
27 Եւ անոնց սերունդը արգերու մէջ ձգէ,
Ու զանոնք երկիրներու մէջ ցրուէ:
28 Եւ անոնք ինելիթքովիրի յարեցան,
Ու մեռածներուն զոհերը կերան.
29 Եւ իրենց գործերովը Տերը բարկացուցին.
Ու անոնց վրայ ժանտամահ հասաւ:
30 Եաքը Փենէչէ ելաւ ու գատաստան ըրաւ,
Եւ ժանտամահը գագրեցաւ:
31 Ու այս բանը անոր արդարութիւն սեպուեցաւ
Ազգէ մինչև ազգ յաւիտեան:
32 Կաև բարկացուցին ԿԱՆԻՒ Մերիպայի ջուրերուն
վրայ,
Ու անոնց համար Մովկէսի գէշ եղաւ.
33 Վասն զի դասնացուցին անոր հոգին,
Ան ալ անխորհդաբար խօսեցաւ իր ըրթունքներով:

*Եթէ. Խըսմատին մէջ. Եղեկ. ժգ. 5. իր. 30.
+Եթէ. ձեռքը վերցուց. Ել. զ. 8. ր 0ր. լր. 40.

- 34 Զեղոմնցուցին այն ազգերը
Ու Տէրը լսեր էր անոնց.
- 35 Հապա հեթանոսներուն հետ խոռոշուեցան
Ու անոնց գործերը ոորվեցան.
- 36 Եւ անոնց կուռքերուն ծառայեցին,
Ու անոնք իրենց սրբայիթ եղան:
- 37 Եւ իրենց աղաքները ու աղջիկները
Դեւերուն զոհեցին.
- 38 Ու անմեղ արիւն թափեցին,
Իրենց աղաքներուն ու աղջիկներուն արիւնք,
Զորոնք զահեցին Քանանու կուռքերուն.
- 39 Եւ իրենց գործերովլ պղծուեցան,
Ու իրենց ըրածներավը պոռնկութիւն ըրին:
- 40 Ուստի Տէրոջը բարկութիւնը բորբսքեցու իր ժողովը
Վուրդին վրայ,
- Ու զղուեցան իր ժառանգութիւնէն.
- 41 Եւ զանոնք հեթանոսներուն ձեռքը մատանեց,
Ու զանոնք աստղները տիրեցին անոնց վրայ:
- 42 Եւ անոնց թշնամիները նեղեցին զանոնք,
Ու անոնց ձեռքին տուկ խոնարհեցան:
- 43 Շատ անգամ փրկեց զանոնք.
Բայց անոնք իրենց խորհուրդներովլ դառնացուցին
զԱնիտ,
- Ունուասացան իրենց անօրէնութիւններուն համար
- 44 Սակայն անիկա նայեցաւ անոնց նեղութեանը,
Երբ անոնց աղաքները լսեց,
- 45 Ու անոնց համար իր ուխտը յիշեց,
Եւ իր մեծ ողբանութեանը համեմատ զղացաւ
- 46 Ու անոնց բոլոր գերեվարներուն առջև

- Գլուխիւն գտնել տուաւ անոնց:
- 47 Փրկէ մեզ ով Տէր, մեր Աստուածը,
Ու ժողվէ մեզ հեթանոսներուն մէջէն,
Որպէս զի քու սուրբ անուանդ դոչութիւն մասու-
ցանենք,
- Ու քու օրհնութիւնովդ պարծենանք:
- 48 Օրհնեալ ըլպայ Տէրը, Խորայէլի Աստուածը,
Յաւիտեան յաւիտենից:
Ու բալը ժողվարդը թող ըսէ, Ամէն: Ալէլուիա

ՍԱՂՄՈՍ ՃԵ

- 1 Պահացէք Տէրոջմէն, վասն զի բարի է,
Վասն զի անոր ողբանութիւնը յաւիտեան է:
- 2 Թող այսուեր ըսէն Տէրոջը փրկաճները,
Զորոնք փրկեց թշնամիին ձեռքէն,
- 3 Ու ժողվեց զանոնք երկիրներէն,
Արեւելքէն ու արեւեմատքէն, հիւսիսէն ու *ժողվէն:
- 4 Ունոնք մոլորեցան անսպատին մէջ, անջուր ճամ-
բու մէջ.

Բնակելու քաղաքը չգտան:

- 5 Անօթի ու ծարաւ ըլլուղով
Հոգինին իրենց ներսիդին կը մորէր:
- 6 Ու Տէրոջը աղաղակեցին իրենց նեղութեանը մէջ,
Եւ անիկա փրկեց զանոնք իրենց տառապանիքներէն:
- 7 Ու անոնց ուղիղ ճամբու մէջ առաջնորդեց,
Որպէս զի բնակելու քաղաք երթան:
- 8 Թող գոհանան Տէրոջմէն իր սղութանութեանը համար,
Ու մորդոց որդիներուն իր ըրած հրաշքներուն համար.

- 9 Վասն զի անհիկա ծալւած հոգին կը յարկեցնէ,
Ու անօթեցած բարութիւնով կը լւցնէ:
- 10 Անոնք խաւարի ու մահուան շուքի մէջ կը նստէին,
Տառապանքով ու երկաթով կապաւած էին.
- 11 Վասն զի Աստուծոյ խօսքերուն հակասակ կեցան,
Ու Բարձրելցին խորչուրքը անարգեցին:
- 12 Ուստի անիկա աւ նեղութիւնով խսնարչեցուց անոնց
սիբար.
- Խնկոն ու օդնական մը չկար:
- 13 Եւ Տէրոջը աղաղակեցին իրենց նեղութեանը մէջ,
Ու զանոնք փրկեց իրենց տառապանքներէն:
- 14 Զամոնք խաւարէն ու մահուան շուքէն համեց,
Ու անոնց կապանքները կարստեց:
- 15 Թող գոհանան Տէրոջմէն իր ողբարութեանը համոր,
Ու մարդոց որդիներան իր ըստծ հրաշքներուն համար.
- 16 Վասն զի պղնձէ գոները փշրեց:
Ու երկաթէ նիգերը կարտեց:
- 17 Ցիմոնները իրենց չար ճամբառն համոր
Ու իրենց անօրէնութիւններուն համար նեղութիւն
կը կրեն.
- 18 Անոնց անձը տմէն կերակուրէ կը զզուի,
Ու մինչեւ մահուան գոներուն կը մօտենան:
- 19 Եւ Տէրոջը կ'աղաղակեն իրենց նեղութեանը մէջ,
Ու կը փրկէ զանոնք իրենց տառապանքներէն:
- 20 Իր խօսքը կը զրկէ ու կը բժշկէ զանոնք,
Ու կ'աղաղակ զանոնք իրենց կործանումէն:
- 21 Թող գոհանան Տէրոջմէն իր ողբարութեանը համոր,
Ու մարդոց որդիներուն իր ըստծ հրաշքներուն համար.
- 22 Եւ գոհութեան պատարագներ մասուցանեն,
Ու անօր գործերը ցնծութեամբ պատմեն:

- 23 Նաւերով ծալը իջնողները
Ու մեծ ջուրերու մէջ գործ գործողները,
- 24 Անոնք Տէրոջը գործերը
Ու անօր հրաշքները կը տեսնեն անգունդին մէջ:
- 25 Վասն զի ան Կ'ըսէ ու մըրկալից հովը կը հանէ,
Որ անոր աղիքները կը լսողձբացնէ:
- 26 Երկինք կ'ելլեն, ու անգունդը կ'իջնեն.
Անոնց անձերը նեղութենէ կը հալին.
- 27 Գինով մարգու պէս կը դոզդպան ու կ'երերան,
Եւ անոնց բոլոր լիմասութիւնը կը հատնի:
- 28 Այն տաեն Տէրոջը կ'աղաղակեն իրենց նեղութեանը
մէջ,
Ու կը փրկէ զանոնք իրենց տառապանքներէն:
- 29 Մըրիկը հանգարանութեան կը դարձնէ,
Ու աղիքները կը դադարին:
- 30 Իրենք աւ կ'ուրախանան որ դադարեցան.
Եւ կ'առաջնորդէ անոնց իրենց ուղած նաւահան-
գիսուր:
- 31 Թող գոհանան Տէրոջմէն իր ողբարութեանը համոր,
Ու մարդոց որդիներուն իր ըստծ հրաշքներուն համար.
- 32 Եւ թող բարձրացնեն զանիկա ժողովարդին ժողով-
քին մէջ,
Ու ծերերուն ատեանին մէջ գովեն զանիկա:
- 33 Գետերը անապատի կը դարձնէ,
Ու ջուրերուն գնացքները՝ չոր երկրի,
- 34 Ու պաղապեր երկիրը աղի երկրի՝
Անօր բնակիչներուն չարութեանը համար
- 35 Անապատը ջուրերու լմճի կը փոխէ,
Ու չար երկրը՝ ջուրերու գնացքի.
- 36 Եւ անօթիները չոն կը բնակեցնէ,

- Որպէս զի բնակելու քաղաք հաստատեն,
 37 Ու արտեր ցանեն և այգիներ տնկեն,
 Որպէս զի արմանիք պատուղ բերեն;
 38 Զանանք կ'օրէնէ, և անոնք խիստ կը բազմանան,
 Ու անոնց անաստաները չպակաեցներ։
 39 Նորէն կը պակախ ու կը ցածնան
 Բռնութենէ, նեղութենէ ու արամութենէ;
 40 Անարդանք կը թափէ իշխաններուն վրայ,
 Ու զանանք ճամբայ չունեցող անսպատի մէջ կը մո-
 լուրեցնէ։
 41 Բայց աղքատը խեղջութենէ կը բարձրացնէ։
 Եւ առար ասհմերը ոչխարիներու հօտի պէս կ'ընէ։
 42 Ուղղիները պիտի տեսնեն և ուրախանան.
 Ու ամէն անօրէնսւթիւն իր բերանը պիտի դոցէ։
 43 Ո՞վ է իմաստուն՝ որ այս բաները պահէ։
 Անիկա Տէրոջը ողպրմութիւնները պիտի հստկնայ։

ՍԱՂՄՈՍ ՃԲ

Դասիթի երգը ու Սաղմանը

- 1 **Ի**մ սիրոս պատրաստ է, ով Աստուած։
 Պիտի երգեմ ու սաղմոն պիտի լսեմ իմ փառքովս ալ։
 2 Արթնցիր, ով տաւիլ ու քնար.
 Ես կանուխ պիտի արթնամ։
 3 Ով Տէր, ժողվուրդներուն մէջ քեզ պիտի գովեմ։
 Ու սաղմոն պիտի երգեմ քեզի ազգերուն մէջ։
 4 Վասն զի քու ողպրմութիւնդ մեծ է ու երկինքէ վեր,
 Եւ քու ճշմարտութիւնդ մինչեւ ամպերը։
 5 Երկինքի վրայ բարձրացիր, ով Աստուած։
 Ու քու փառքդ բոլոր երկրի վրայ ըլլայ։

- 6 Որպէս զի քու սիրելիներդ փրկուեն՝
 Աշ ձեռքովդ ապրեցուր ու պատասխան տաւր ինծիք,
 7 Աստուած Կիր սրբութիւնովը՝ Խօսեցաւ,
 Ես պիտի ցնծամ, Սիւքէմը պիտի բաժնեմ,
 Ու Սոկքովթի հովիալ պիտի չափեմ։
 8 Իմն է Գաղաւադ ու իմն է Մանասէ.
 Եւ Եփեմ՝ գլխուս զօրութիւնն է.
 Յուրաք իմ օրէնադիրս է.
 9 Մովար իմ լոււցուելու ամանս է.
 Եւսմի վրայ պիտի ձգեմ իմ մուծակու.
 Փղասացիներուն վրս ձայնով պիտի ցնծամ։
 10 Ո՞վ պիտի տանի զիս պարսպաւոր քաղաքը.
 Ո՞վ պիտի տաւածնորդէ ինծի մինչև Երամլ։
 11 Զէ՞ որ գուն, ով Աստուած, որ երեսէ ձգեցիր մեղ,
 Ու մեր զօրքերուն հետ չելար, ով Աստուած։
 12 Նեղութեան մէջն մերի օգնութիւն տաւր,
 Վան զի փուռն է մարդուն փրկութիւնը։
 13 Աստուծով քաջութիւն պիտի ընենք.
 Ու ան պիտի կոխէ մեր թշնամիները։

ՍԱՂՄՈՍ ՃԲ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոն Դասիթի

- 1 **Ո**վ իմ օրհնութեան Աստուածը, լուս մի կենար.
 2 Վասն զի ամենարշալին բերանը
 Ու նենդաւորին բերանը բացուեցաւ իմ վրաս.
 Ինծի գէմ՝ տուտ լրջուով խօսեցան։
 3 Ուտելութեան խօսքերով զիս պատեցին,

*կամ, իր սրբարանին մէջ

- Եւ ինծի հետ անիբաւ աեղը կուսեցան:
- 4 Խմ' սիրյս փոխարէն հակառակութիւն ըլմն ինծի,
Բայց ես ազօթք ՔՇԵՇ:
- 5 Կաև բարիին աեղ չառաւցին:
Ու իմ' սիրյս աեղ՝ տաելսութիւն:
- 6 Անոր վրայ ամքարիշտ մը գերակացու դիր,
Եւ *Սատանայ թալ կոյնի անոր աջ կողմը.
- 7 Երբ գատառէ՝ յանցաւոր ելլէ,
Ու անոր ազօթքը մեղք ըլլայ:
- 8 Անոր օրելը պակսին,
Եւ անոր պաշտօնը ուրիշը անէ:
- 9 Անոր սրգիները որբ ըլլան,
Ու անոր կիմ՛ որբեւարի
- 10 Եւ անոր սրգիները թափառական ըլլան ու մուրան,
Եւ իրենց աւերակներէն ելլէլ հաց փնաւեն:
- 11 Փոփ տուղը աւնէ անոր բոլոր ունեցածը,
Ու օտարիները յափշտակին անոր վասակածը
- 12 Բնուտ մէ՛կը գթութիւն ընէ անոր,
Ու մէ՛կը չողպամի անոր սրբերուն:
- 13 Անոր զաւակները կորուսափ մասնուին,
Անսոց անունը գալու աղդին մէջ ընջուի:
- 14 Անոր հայրերուն անօրէնութիւնը Տէրոջը առջե յիշ
ուի,
- Եւ անոր մօրը մեղքը չնջուի:
- 15 Անոնք ամէն ժամանակ Տէրոջը առջե ըլլան,
Որպէս զի անոնց յիշատակը երկրէ վերցնէ:
- 16 Վասն զի անիկա աղբարութիւն ընելլ չյիշեց,
Հազար խեղճը ու աղքատը հալածեց,

- Որպէս զի սիրաը կոտրածը սպաննէ:
- 17 Նաև անէծքը ոիրեց, ու թող անոր վրայ գայ.
Եւ օրչնութիւնը չուզեց, ու թող անէ հեռու ըլլայ:
- 18 Անէծքը իր հանգերձն պէս հագաւ,
Եւ անիկա ջուրի պէս անոր փորին մէջ մտնէ,
Ու ձեթի պէս՝ անոր տկալներուն մէջ:
- 19 Հագներու հանգերձն պէս
Ու միշտ մէջքը կապելու գոտիի պէս ըլլայ անոր:
- 20 Ինծի հակառակ կեցողներուն
Ու իմ' անձն համար չար փասողներուն վարձը այս
ըլլայ Տէրոջմէն:
- 21 Բայց գուն, ով Տէր Եհովա, *օգնէ ինծի՝ քու ան-
ունոնդ համար.
- Փրկէ զիս քու սղորմութեանդ բարի ըլլալուն համար:
- 22 Վասն զի ես խեղճ ու աղքատ եմ,
Ու իմ' սիրան ներսիդիս խոցուած է:
- 23 Ես երինցող ստուերի պէս անցայ,
Մարտիփ պէս թօժվուեցայ:
- 24 Ծունկերս ծոմապահութենէ տկարացան,
Ու մորմինս իր պարարտութենէն մաշեցաւ:
- 25 Ու ես անոնց նախատինք եղոյ.
Երբ զիս կը տեսնեն՝ գլուխինին կը շարժեն
- 26 Օգնէ ինծի, ով Տէր, իմ' Աստուածու.
Փրկէ զիս քու սղորմութեանդ համեմատ.
- 27 Ու գիտնան թէ քու ձեւքդ այս է,
Եւ դուն ըրի ասիկա, ով Տէր:
- 28 Թող անոնք անիծեն, բայց գուն օրչնէ.
Երբ բնձէ բեմ ելլին, թող ամշնան,

*կու, հակառակորդը

*Եբ. ինծի հետ գործէ

- Բայց քու ծառադ թող ուրախ ըլլայ:
- 29 Խմ թշնամիներս թող նախասահնկ հագնին,
Ուբենց ամօթ զատամնէնի պէս իրենց վրայ առնեն
30 Հաս պիտի գոհանամ Տէրոջմէն իմ բերնավս,
Ու շատերուն մէջ պիտի օրհնեմ զանիկաւ
31 Վասն զի ինք աղքատին աջ կողմը կը կայնի,
Որպէս զի անոր անձը դաստապաղներէն փրկէ:

ՍՈՂՄՈՍ ՃԺ.

Սաղմոս Դաւթիւ

- 1 Տէրը իմ Տէրոջն ըստաւ, Նստէ իմ աջ կողմն,
Մինչև քու թշնամիներդ սոքերուդ պատուանդան
ընեմ:
- 2 Տէրը քու զօրութեանդ գաւազանը Արօնէ պիտի զրկէ.
Քու թշնամիներուդ մէջտեղը գուն ալրէ:
- 3 Ժողազուրդդ քու զօրութեանդ օրը
Յօժարանիամ պիտի ըլլայ սրբութեան զարդարանք-
ներով.
Քու *երիտասարդներդ արշալսափն արգանդի ցողէն՝
Ա-եւէ պիտի ըլլան քեղին:
- 4 Տէրը երգումը ըրաւ ու պիտի չզդուց,
Դուն յաւիտեան Մելքիսեդեկի կարգին պէս քահա-
նայ եւ:
- 5 Տէրը քու աջ կողմէն է,
Անիկա իր բարկութեան օրը թագաւորներ պիտի
ջարդէ:

*Ե՞ր, երիտասարդութեանդ ցողը արշալսափն ար-
գանդէն

- 6 Անիկա չեթ անասներուն մէջ դատաստան պիտի ընէ,
Մեռելներով պիտի լեցնէ,
Շատ երկիրներու վրայ զլուկի եւ շնչերէ պիտի ջարդէ:
7 Ճամփուն մէջ գետէն պիտի խմէ.
Անոր համար գլուխ պիտի վերցնէ:

ՍՈՂՄՈՍ ՃԺ.

- 1 Աւէլլուկուս Բոլոր սրբու Տէրը պիտի գովեմ՝
Ուզիներուն ժողովքին ու ժողովուրգին մէջ:
2 Տէրոջը գործերը մէծ են,
Զաննանք սիրովներուն բոլորէն կը քննուին:
3 Անոր գործը փառուառը ու վայելուչ է,
Եւ անոր աղդալութիւնը յաւիտեան կը մնայ:
4 Յէշել տուաւ իր հրաշքները.
Տէրը ողբանծ ու գլծած է:
5 Կերակուր տուաւ իրմէ վախցողներուն,
Իր սեխար յաւիտեան կը յիշէ:
6 Իր գործերուն զօրութիւնը ցուցուց իր ժողովուր-
դին,
Անանց տալով ազգերուն ժառանգութիւնը:
7 Անոր ձեռքերուն գործերը ճշմարտվթիւն ու իրու-
ւունք են,
Անոր բոլոր պատուիրանքները հաւատարիմ են,
8 Յաւիտեան յաւիտենից հաստատուած են,
Ճշմարտվթեամի և ողջութեամի եղած են:
9 Փրկութիւն զրկեց իր ժողովուրգին,
Իր սեխար յաւիտեան պատուիրեց.
Առւրի ու ահաւոր է անոր անունը:
10 Իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է

Բարի խոչեմութիւն ունին այն ամէնը որոնք զանանք
կը լինեն.

Անոր օրհնութիւնը յաւիտեան կը մնայ:

ՍԱԿՄՈՍ ձժբ

- 1 Ավելուիս: Երանի՛ այն մարդուն որ Տէրոջմէն կը
վախնայ,
- 2 Ու անոր պատութրանքներուն շատ կը հաւենի:
Անոր սերունքը զօրաւոր պիտի ըլլոյ երկրի վրայ.
Ուղեղներուն ցեղը պիտի օրհնափի
- 3 Առաստութիւն ու հալաստութիւն պիտի ըլլոյ անոր
տանկ մէջ,
- 4 Ու անոր արդարութիւնը յաւիտեան պիտի մնայ:
- 5 Խաւորի մէջ լցո կը ծագի ուղիղներուն.
Ողբանած ու գթած և արդար է:
- 6 Բարի մարդը կ'ողբամի ու փոխ կու տայ.
Իր բաները իրաւունքով կը կաստարէ:
- 7 Ցիրաւի անիկա յաւիտեան պիտի շասանի.
Արգարին յիշաստակը յաւիտեան պիտի մնայ:
- 8 Անիկա գէշ լուրէն չվախնար.
Անոր սիրալ հաստատ է, ու Տէրոջը կը յոււսայ:
- 9 Անոր սիրալ հաստատած է, չվախնար,
Մինչև իր թշնամիներուն խրուսոց տեսնէ:
- 10 Տարածեց, աղքատաներուն տուաւ.
Անոր արդարութիւնը յաւիտեան կը մնայ.
Անոր եղիցիր ֆաստքով պիտի բարձրանայ:
Ամրարիշալ պիտի տեսնէ ու բարկանայ,
Իր ակռաները պիտի կրծտէ ու պիտի հալի.
Ամրարիշաներուն ցանկութիւնը պիտի կորսուի:

ՍԱԿՄՈՍ ձժբ

- 1 Ավելուիս: Օրհնեցէք, ով Տէրոջը ծառաները,
Օրհնեցէք Տէրոջը անտւնը:
- 2 Օրհնեալ ըլլոյ Տէրոջը անտւնը
Ասկէ ետե մինչեւ յաւիտեան:
- 3 Արեւելքէն մինչեւ արեւմնտաք
Օրհնեալ ըլլոյ Տէրոջը անտւնը:
- 4 Տէրը բարձր է բարձր ազգերուն վասյ.
Անոր փառքը երկինքէն վեր է:
- 5 Մեր Տէր Աստուծոյն պէս ո՞վ կայ,
Որ բարձրութեան մէջ կը լնակի.
- 6 Որ երկինքի ու երկրի մէջ եղած բաները
Տեսնելու համոր կը խոնարհի.
- 7 Որ աղքատը փաշիէն վեր կը վերցնէ,
Ու անսնկը ազբանոցէն կը բարձրացնէ,
- 8 Որպէս զի պահանձնաւ իշխաններուն հետ,
Իր ժողովուրդին իշխաններուն հետ.
- 9 Որ ամսուն կինը տունը կը լնակիցնէ,
Ու որդիներու ուրափի մայրը ի ձեւ: Ավելուիս:

ՍԱԿՄՈՍ ձժբ

- 1 Երբ Խարայէլ Եգիպտոսէ գուրս ելաւ,
Ու Յակիսի տունը՝ օտարալեզու ժողովուրդին մէջէն,
- 2 Յուգա անոր սրբարանը՝
Ու Խարայէլ անոր իշխանութիւնը եղաւ:
- 3 Ծովը տեսաւ ու փախաւ.
Յորդանան ետ գարձաւ:
- 4 Լեսները խոյերու պէս զայթ կառեցին,

- Ու բլուրները՝ գառնուկներու պէս
 5 Քերի ի՞նչ եղաւ, ով ծով, որ փափար,
 Եւ գուն, Յորդանան, որ ես դարձար:
 6 Ով լեռներ, Բայ՞ խցիկրու պէս ցաթէ կտեցիք,
 Ու գուք, բլուրներ, գառնուկներու պէս
 7 Սարսափէ, ով երկիր, Տէրոջը երեսէն,
 Յակարի Աստուծոյն երեսէն,
 8 Որ վէմը ջուրերու լիճի դարձուց,
 Ու ապատաժը՝ ջուրերու ազրիւրի

ՍԱՂՄՈՍ ձժԵ

- 1 Ու թէ մեղի, ով Տէր, ոչ թէ մեղի,
 Հապա քու անուանդ փառք տուր՝
 Քու ողբրմութեանդ ու ճշմարտութեանդ համար:
 2 Խնչու համար չեթանուները ըսկն թէ
 Ո՞ւր է հիմու անոնց Աստուծուց:
 3 Բայց մեր Աստուծը երկինքն է.
 Անիկա իր բոլոր ուղածը ըրաւ:
 4 Անոնց կուռքերը արծաթ ու սակի են
 Մարդու ձեռքի դարձեր են.
 5 Բերան ունին, բայց չեն խօսիր.
 Աչքեր ունին, բայց չեն տեսներ.
 6 Ականջներ ունին, բայց չեն լսեր.
 Քիթ ունին, բայց հոս չեն տաներ.
 7 Զեռքեր ունին, բայց չեն շօշափեր.
 Ոտքեր ունին, բայց չեն քալեր,
 Ու իրենց կոկրդովը ձայն չեն հոներ:
 8 Անոնց նման կ'ըլլան զանոնք շինողները
 Ու բոլոր անոնց յուսացողները

- 9 *Ով իսրայէլ, Տէրոջը յուսուս՝
 Ան է անոնց օգնութիւնը ու ասպարը:
 10 +Ով Ա.չարոնի առւնը, Տէրոջը յուսացէք.
 Ան է անոնց օգնութիւնը ու ասպարը:
 11 †Ով Տէրոջմէ վախցողներ, Տէրոջը յուսացէք.
 Ան է անոնց օգնութիւնը ու ասպարը:
 12 Տէրը մեր կը միշէ ու պիտի օրչնէ,
 Իսրայէլի առւնը պիտի օրչնէ,
 Ա.չարոնի առւնը պիտի օրչնէ.
 13 Տէրոջմէ վախցողները պիտի օրչնէ,
 Պատիկները մեծերուն չետ:
 14 Տէրը ձեզի բարէ+ պիտի առելցնէ,
 Ձեզի ու ձեր որդիներուն:
 15 Օրշնեալ էք դաւ-ք Տէրոջմէն,
 Որ երկինքն ու երկիրը ասեղծեց:
 16 Երկնից երկինքը Տէրոջն է,
 Բայց երկիրը մարդոց որդիներուն տուսու:
 17 Մեռելները Տէրը չեն օրչներ,
 Ու ալ այն ամէնը որ լգերեզմանը կ'իջնեն:
 18 Բայց մենք Տէրը պիտի օրչնենք
 Ասկէ ետև մինչեւ յաւիտեան: Ալէլուիա:

ՍԱՂՄՈՍ ձժԶ

- 1 § Ուրախ եմ՝ ես՝ վան զի Տէրը

*կամ, իսրայէլ Տէրոջը կը յուսուց
 †կամ, Ա.չարոնի առւնը Տէրոջը կը յուսան
 ‡կամ, Տէրոջմէ վախցողները Տէրոջը կը յուսան
 ||ԵԲՇ. լւսութիւնը
 Ցկամ, Տէրը կը սիրեմ

- իմ ձայնս ու աղաւանքս լսեց..
- 2 Վասն զի անիկա իր ականջը ինձի խոնարչէցուց,
 - Ու իմ օրերուս մէջ անոր պիտի կանչեմ:
 - 3 Մահուան լարերը զիս պատեցին,
 - Ու գերեվանին վիշտերը զիս գտան.
 - Նեղութիւն ու տրամութիւն գտայ:
 - 4 Բայց ես Տէրոջը անունը կանչեցի,
 - Կ'աղաչեմ, ով Տէր, քրկէ իմ անձաւ
 - 5 Ողբրմն ու արդար է Տէրը,
 - Եւ մեր Աստուածը գթած է:
 - 6 Տէրը միամիտները կը պահէ.
 - Ես խեղջ եղայ ու անիկա զիս աղասեց:
 - 7 Ով իմ անձս, գարձիր քու չսանգստութիւնսդ,
 - Քանի Տէրը քեզի բարիք ըրաւ:
 - 8 Վասն զի գուն իմ անձս մոհսուանէ փրկեցիր,
 - Իմ աչքերս արցունքին, ու իմ ոսքերս գոյթակղելէն,
 - 9 Տէրոջը առջև պիտի քաղեմ
 - Կենդանիներուն երկին մէջ :
 - 10 Հաւատացիք, անոր համար խօսեցայ.
 - Ես խիստ թշուառացայ:
 - 11 Խմ շփմութեանս մէջ ըսի թէ
 - Ամէն մարդ սուտ է:
 - 12 Ի՞նչ հասուցանեմ Տէրոջը՝
 - Անոր բոլոր ինձի ըքանչ բարութեանը փոխարէն:
 - 13 Փրկութեան բաժակը պիտի առնեմ,
 - Ու Տէրոջը անունը պիտի կանչեմ:
 - 14 Իմ ուխտերս Տէրոջը պիտի հասուցանեմ
 - Իր բոլոր ժողովուրդին առջեւ:
 - 15 Պատուական է Տէրոջը առջեւ
 - Իր սուրբերուն մահը:

- 16 Կ'աղաւչեմ, ով Տէր, վասն զի ես քու ծառադ եմ,
 - Ես քու ծառադ եմ ու քու աղաւինիդ սրբին.
 - Դուն իմ կապերս արձակեցիր:
 - 17 Գոյսութեան պատարագ պիտի մասուցանեմ քեզի,
 - Ու Տէրոջը անունը պիտի կանչեմ:
 - 18 Խմ ուխտերս Տէրոջը պիտի հասուցանեմ
 - Իր բոլոր ժողովուրդին առջեւ,
 - 19 Տէրոջը տանը սրահներուն մէջ,
 - Բու մէջդ, ով Երուսաղէմ: Ալէլուիա:
- ### ԱԱՂՄՈՍ ձիէ
- Օրչնեցէք Տէրը, ով բոլոր ազգեր,
 - Գովեցէք զանիկոս, ով բարոր ժողովուրդներ.
 - 2 Վասն զի անոր սղբրմութիւնը մեր վրայ մեծ է,
 - Ու Տէրոջը Ճմարտութիւնը յաւիտեան է: Ալէլուիա:
- ### ԱԱՂՄՈՍ ձիէ
- 1 Պահուցէք Տէրոջմէն, վասն զի բարի է.
 - Վասն զի անոր սղբրմութիւնը յաւիտեան է:
 - 2 Խորայէլ թողլ ըսէ թէ
 - Անոր սղբրմութիւնը յաւիտեան է:
 - 3 Ահարնի առնը թողլ ըսէ թէ
 - Անոր սղբրմութիւնը յաւիտեան է:
 - 4 Տէրոջմէ վախցողները թողլ ըսեն թէ
 - Անոր սղբրմութիւնը յաւիտեան է:
 - 5 Նեղութեան մէջ Տէրոջը կանչեցի,
 - Եւ Տէրը պատասխան սուտաւ ինձի, լայնարձակ տեղ
 - մը հանելու:
 - 6 Տէրը ինձի հետ է, չեմ վախնար.

- Մարդու ինծի ի՞նչ կրնայ ընել :
- 7 Տէրով իմ՝ օգնականներուս հետ քրթել ինծի հետ է,
Ու ես իմ՝ թշնամիններուս խրառութը պիտի տեսնեմ:
- 8 Լաւ է Տէրովը յաւապլ,
Քան թէ մարդոց ապաւենիլ :
- 9 Լաւ է Տէրովը յաւապլ,
Քան թէ իշխաններուն ապաւենիլ :
- 10 Բոլոր ազգերը զիս պաշտպեցին.
Բայց Տէրովը անսունովը պիտի ջարդեմ զանոնք:
- 11 Իմ՝ բոլորովիք առան, և զիս պաշտպեցին
Բայց Տէրովը անսունովը պիտի ջարդեմ զանոնք:
- 12 Մեղսուներու պէս իմ՝ բոլորովիք առան,
Փուշերու կրտիկ պէս մարեցան.
- Քանիք Տէրովը անսունովը պիտի ջարդեմ զանոնք:
- 13 Սաստիկ հրեցիր զիս, որպէս զի վար իշնամ.
Բայց Տէրը օգնեց ինծի:
- 14 Տէրը իմ՝ զօրութիւն ու սաղմոսս է,
Ու իմ՝ փրկութիւն եղաւ:
- 15 Արդարներուն բնակարաններուն մէջ ցնծութեան ու
փրկութեան ձայն կայ.
Տէրովը աջ ձեռքքը զօրութիւն կը գործէ:
- 16 Տէրովը աջ ձեռքքը բարձր է.
Տէրովը աջ ձեռքքը զօրութիւն կը գործէ:
- 17 Պիտի չմեռնիմ, հապա պիտի ապրիմ.
Ու Տէրովը գործերը պատմեմ:
- 18 Տէրը զիս շատ խրառեց,
Բայց մահուան չմնանեց զիս:
- 19 Բացէք ինծի արդարութեան դռները.
Անսնց մէջ պիտի մանեմ, ու Տէրովը գոհութիւն մա-
տուցանեմ:

- 20 Անյու է Տէրովը դուռը,
Արդարները առկէ պիտի մտնեն:
- 21 Կը գոհանամ՝ քեզմէ որ ինծի պատասխան տուիր,
Ու ինծի փրկութիւն եղար:
- 22 Անյն քարը զոր շինալները անսուդեցին,
Անկիւնին գլուխիւն եղաւ:
- 23 Ասիկս Տէրովը մէն եղաւ.
Զարմաննապի է ասիկս մեր աչքերուն:
- 24 Անյու օրն է զոր Տէրը ստեղծեց.
Ցնծոնք և ուրախ ըլլանք անոր մէջ:
- 25 Հիմն կ'աղաւէմ, ով Տէր, փրկէ.
Հիմն կ'աղաւէմ, ով Տէր, յաջողէ:
- 26 Օր ցնեալ ըլլայ ան որ Տէրովը անսունով կու գայ.
Օր ցնեցինք ձեզ Տէրովը առնեն:
- 27 Տէրը Աստուած է, և լցո կը ցուցնէ մեզի.
Զոհի անսունանեց ըւաններով կապեցէք,
Ու սեղանին եղջիւններուն հոգեց-ցե՛:
- 28 Դուն ես իմ՝ Աստուածս, ու քեզի գոհութիւն պիտի
մտաւցանեմ.
- Ով իմ՝ Աստուածս, քեզ պիտի բարձրացնեմ:
- 29 Գոհացէք Տէրովը մէն, վասն զի բարձր է,
Վասն զի անոր ողսութիւնը յաւիտեան է:

ՍԱՆ ՄՊՈՍ ՃԺԹ

Ա. Լ. Է Ֆ

- 1 Երանի՛ ճամբով ամբիձներուն,
Որմնք Տէրովը օրէնքին մէջ կը քալեն:
- 2 Երանի անսնց՝ որոնք անոր վկայութիւնները կը պա-
չեն,

- Ա- բոլոր պատով զինք կը խնդրեն, ..
 3 Եւ ամօքէնութիւն չեն ըներ,
 Հողու անոր ճամբաներուն մէջ կը քալեն:
 4 Դուն պատուիրեցիր որ շատ գդուշութեամբ
 Քու հրամաններդ պահէնք:
 5 Երանի՞ թէ իմ՝ ճամբաներս յալողին,
 Որպէս զի քու կանոններդ պահէմ:
 6 Այն ատեն պիտի չամչնամ՝
 Երբ քու բոլոր պատուիրանքներուդ զգուշութիւն
 ընեմ:
 7 Պիտի գովելու քեզ ուղիղ պատով,
 Երբ քու արդար գաստասաններդ արդիմ:
 8 Քու կանոններդ պիտի պահէմ.
 Զիս բոլորովին մի թողուր:

Պ Ե Թ

- 9 Երիտասարդը լինչօլ մաքրէ իր ճամբան.
 Քու խօսիր համեմատ անոր զգուշութիւն ընելով,
 10 Իմ բոլոր սրամվս խնդրեցի քեզ.
 Մի թողուր զիս որ քու պատուիրանքներէդ մոլորիմ,
 11 Իմ սրամին մէջ պահէցի քու խօսիրդ,
 Որպէս զի չմեղանչեմ քեզի դէմ:
 12 Օրչնեալ ես գուն, ուլ Տէր.
 Սորվեցուր ինծի քու կանոններդ:
 13 Իմ շրջունքներովս պատմեցի
 Քու բերնիդ բոլոր գաստասանները,
 14 Քու վկայութիւններուդ ճամբանվս ուրախացայ,
 Որպէս թէ ամէն կերպ հարասութիւնով,
 15 Քու հրամաններուդ վրայով պիտի մտածեմ,

- Եւ քու ճամբաներդ պիտի գիտեմ:
 16 Քու կանոններովդ պիտի ուրախանամ,
 Ա- քու խօսիր պիտի չմունամ:

Կ Ա Մ Ե Լ

- 17 Բարութիւն ըրէ քու ծառացիդ,
 Ուրգէս զի սպարիմ ու քու խօսիր պահէմ:
 18 Բաց իմ աչքերս,
 Որպէս զի քու օրէնքեդ հրաշքներ տեսմեմ:
 19 Պանդուտս եմ ու երկրի վրայ.
 Մի ծածկեր ինծմէ քու պատուիրանքներդ:
 20 Իմ անձս կը նեղուի
 Ամէն ժամանակ քու դաստաստաններուդ ցանկա-
 նալէն:
 21 Դուն սասաեցիր անիծեալ ամբողոսուանները,
 Քու պատուիրանքներէդ մոլորովները:
 22 Նախատինքը ու անարգանքը վերցուը ինծմէ,
 Վասն զի քու վկայութիւններդ պահէցին,
 23 Խշանաներ ալ կը նատէին ու ինծի դէմ կը խօսէին,
 Բայց քու ծառադդ քու կանոններուդ վրայով կը
 մտածէր:
 24 Քու վկայութիւններդ ալ իմ ուրախութիւնս
 Ու իմ խորհրդականներս են:

Տ Ա Լ Ե Թ

- 25 Իմ անձս հողին կը փակչի.
 Կենդանացուը զիս քու խօսիր համեմատու
 26 Իմ ճամբաներս պատմեցի, ու դուն ինծի պատսա-
 խան տուիր.

- Սորվեցուր ինծի քու կանոններգ։
 27 Քու հրամաններուդ ճամբան ինծի իմացուր,
 Եւ քու սբանչելիքներուդ վրայով պիտի *մոտածեմ։
 28 Իմ անձու արտամութենէն կը հալի.
 Հաստատէ զիս քու խօսքիդ համեմատ։
 29 Ստութեան ճամբան հեռացուր ինծմէ,
 Ու քու օրէնքդ շնորհէ ինծի։
 30 Ճշմարտութեան ճամբան լրարեցի,
 Եւ քու դատաստաններդ իմ որշէն դրի։
 31 Քու վկայութիւններուդ յարեցայ.
 Ու Տէր, զիս մի ամշցներ։
 32 Քու պատուիրաններուդ ճամբան մէջ պիտի լաղեմ։
 Վասն զի դուռն իմ սիրոս պիտի լայնցնես։
- Հ
- 33 Ու Տէր, սորվեցուր ինծի քու կանոններուդ ճամբան,
 Ու մինչև վերջը պիտի պահէմ զանիկու
 34 Իմաստուն ըրէ զիս, որպէս զի քու օրէնքդ պահէմ,
 Ու բոլոր սրտով զանիկու ի դործ դնեմ։
 35 Առաջնարդէ ինծի քու պատուիրաններուդ շաւեղին
 մէջ,
 Վասն զի անոր հաւնեցայ։
 36 Իմ սիրոս քու վկայութիւններուդ յօժարեցուր,
 Ու ոչ թէ ագահութեանն
 37 Ետ դարձուր իմ աչքերս, որպէս զի սնոտի բան շահեա-
 նեն։
 Եւ զիս քու ճամբանդ մէջ կենդանացուր։
 38 Հաստատէ քու խօսքդ

- Քեզմէ վախցող ծառայիդ վրայ։
 39 Ետ դարձուր ինծմէ իմ նախատինքս, որմէ կը վախ-
 նամ,
 Վասն զի քու դատաստաններուդ բարի են,
 40 Ահա ցանկացայ քու հրամաններուդ
 Քու արդարութեանդ մէջ կենդանացուր զիս։
- Վ. Ա. Վ.
- 41 Ու Տէր, թող իմ վրաս գոյ քու ողբրմութիւնդ,
 Եւ քու փրկութիւնդ քու խօսքիդ համեմատ։
 42 Ու ես խօսքով պատավիան պիտի տամ զիս նախա-
 տողին,
 Վասն զի քու խօսքիդ յօւսացած եմ։
 43 Եւ ճշմարտութեան խօսքը բնաւ մի հեռացներ իմ
 բերնէս,
 Վասն զի քու դատաստաններուդ յօւսացած եմ։
 44 Ու քու օրէնքդ միշտ պիտի պահէմ
 Յաւիտեան յաւիտենից։
 45 Եւ լայնարձակ ուժի մէջ պիտի քալեմ,
 Փանզի քու հրամաններդ ինտրեցի։
 46 Ու քու վկայութիւններդ թագաւորներուն առջե
 պիտի խօսիմ,
 Եւ պիտի չամշնամ։
 47 Ու պիտի ուրախանամ քու պատուիրաններովդ
 Զորոնք սիրեցի։
 48 Եւ ձեռքերս գէպի քու պատուիրաններդ պիտի
 վերցնեմ՝ զարնք սիրեցի,
 Ու քու կանոններուդ վրայով պիտի մոտածեմ։

*կամ, խօսիմ. Առաջ. Ճիշ. 5, 6:

ԶԱՅԻՆ

- 49 Յեղէ քու ծառայիդ եղած խօսքը,
Որուն վրայ ինձի յուսալ տուիիր:
- 50 Խմ՝ նեղութեանն մէջ միմիթարութիւնս այս է,
Վասն զի քու խօսքդ զիս կենդանացուց:
- 51 Ամբարտաւանները իխատ շատ ծաղը ըրին զիս,
Բայց ես քու օրէնքէդ չխստորեցպ:
- 52 Ով Տէր, քու առաջուան գտատասաններդ յիշեցի,
Ու միմիթարուեցպ:
- 53 Սսոկումը զիս բանեց այն ամիսարիշաններուն համար՝
Որոնք քու օրէնքդ կըթողան:
- 54 Քու կանոններդ ինձի երգիր եղան
Խմ՝ պանդխառութեանն տանը մէջ:
- 55 Ով Տէր, գիշերը քու անունդ յիշեցի,
Ու քու օրէնքդ պահեցի:
- 56 Այս եղած ինձի,
Վասն զի քու հրամաններդ կըպահեմ:

ԽԵթ

- 57 Դաւան իմ բաժինս ես, ով Տէր.
Ըսի որ քու խօսքերդ պահեմ:
- 58 Բոլոր պատով քու երեսդ խնդիրեցի.
Ողորմէ ինձի քու խօսքիդ համեմատ:
- 59 Խմ՝ ճառմաններուս վրայով մտածեցի,
Եւ իմ ոտքերս քու վկայութիւններուդ դարձուցի:
- 60 Քու պատուիրանքներդ պահելու
Արտորացի ու չուշացպ:

- 61 Ամբարփիշներուն *խումբերը զիս պատեցին,
Բայց ես քու օրէնքդ չմուռցպ:
- 62 Կէս գիշերին կ'ելլեմ՝ քեզի դոչութիւնն մասուցանել
Քու արդար գտատասաններուդ համար:
- 63 Ես ընկեր եղայ այն ամենուն որոնք քեզմէ կը վախ-
նան,

Ու քու հրամաններդ կը պահեն:

- 64 Ով Տէր, երկիր լեցուն է քու ողբրմութիւնովդ.
Սորվեցուր ինձի քու կանոններդ:

ԴԵԹ

- 65 Բարութիւն ըրիր քու ծառայիդ, ով Տէր,
Քու խօսքիդ համեմատ:
- 66 Բարի իմաստութիւն ու գիտութիւն սորվեցուր ինձի,
Վասն զի քու պատուիրանքներուդ հաւատացի:
- 67 Քանի որ վշտացած չէի՝ կը սխալէի,
Բայց հիմու քու խօսքդ կը պահեմ:
- 68 Բարի ես գուն ու բարերար.
Սորվեցուր ինձի քու կանոններդ:
- 69 Ամբարտաւանները ստութիւն հնարեցին ինձի դէմ,
Բայց ես բալոր պատով քու հրամաններդ պիտի պահեմ:
- 70 Անոնց սիրալ ճարպի պէս պարտացատ,
Բայց ես քու օրէնքսվդ ուրախացպ:
- 71 Աղէկ եղաւ ինձի որ վշտացպ,
Որպէս զի քու կանոններդ սորիմ:
- 72 Ինձի հագարաւոր ոսկիի ու արծաթէ
Աւելի աղէկ է քու բերնիդ օրէնքը

*Կամ, Լարերը

Ե Օ Տ

- 73 Զիս քու ձեռքերդ ըրին ու ասեղծեցին.
Իմաստան ըրէ զիս, որպէս զի քու պատուիրանքներդ
արվիմ:
- 74 Քեզմէ վախցողները զիս պիտի տեսնեն և ուրախանան,
Վասն զի քու խօսքիդ յուսացոյ:
- 75 Գիտեմ, ով Տէր, որ քու գտատատաններդ արդա-
րութիւնով են,
Ու իրաւունքով զիս վշտացուցիր:
- 76 Հիմա թող քու ողորմութիւնդ լնծի միփթարութիւն
ըլլայ՝
Քու ծառայիդ բառակ խօսքիդ համեմատ:
- 77 Թող քու գիւղութիւններդ իմ վրաս գան, որպէս զի
սպրիմ,
Վասն զի քու օրէնքդ իմ ուրախութիւնս է:
- 78 Ամբողջուանները պիտի ամշնան,
Վասն զի առաջ պատճառի անիրաւութիւն ըրին
լնծի դէմ:
- Բայց ես քու հրամաններուդ վրայ պիտի մոտածեմ:
79 Թող ինծի դառնան քեզմէ վախցողները
Եւ քու վկայութիւններդ ճանչցողները:
80 Թող իմ սիրս կատարեալ ըլլայ քու կանոններուդ
մէջ,
Այսպէս որ չամչնամ:

Ք Ա Ֆ

- 81 Իմ անձս քու փրկութեանդ *կը կարօտի,

*ԵՖ. կը մաշի

- Ու ես քու խօսքիդ կը յուսամ:
- 82 Իմ աչքերս քու խօսքիդ համար կը նուազին,
Ըսկան թէ Ե՞ր պիտի միփթարես զիս:
- 83 Վասն զի ես ծուխի մէջ բառակ արիկ պէս եղայ,
Բայց քու կանոններդ չմուցոյ:
- 84 Ո՞չաք են քու ծառայիդ օրերը.
Զիս հալածողներուն Ե՞ր դատաստոն պիտի ընես:
- 85 Ամբարտաւանները փամեր փորեցին լնծի համար,
Որ քու օրէնքիդ պէս չեն:
- 86 Քու բոլոր պատուիրանքներդ Ճշմարիտ են.
Զուր սեղ զիս կը հալածէն, օդնէ ինծի:
- 87 Քիչ մնաց որ զիս կորսնցնէին երկրի մէջ,
Բայց ես քու հրամաններդ չժողուցի:
- 88 Քու ողորմութեանդ համեմատ կենդանացուր զիս,
Եւ քու բերնիդ վկայութիւնը պիտի պահեմ:

Լ Ա Մ Է Ց

- 89 Ով Տէր, քու խօսքդ
Յաւիտեան հաստատ է երկնքի մէջ :
- 90 Քու հաւատարմութիւնդ աղդէ մինչև աղդ կը մնայ.
Դուն հաստատեցիր երկիրը ու կը կենայ:
- 91 Քու հրամաններուդ պէս կը կենան Փալւ այսօր,
Վասն զի բոլոր քու ծառաններդ են:
- 92 Եթէ քու օրէնքդ իմ ուրախութիւնս չըլլար,
Այն ասեն կորսուած պիտի ըլլայի իմ արտամութեանս
մէջ :
- 93 Յաւիտեան պիտի չմունամ՝ քու հրամաններդ,
Քանզի անմոցմով կենդանացուցիր զիս:
- 94 Ես քուկդ եմ, փրկէ զիս.
Վասն զի քու հրամաններդ փնտուցի:

95 Ամստրիշտները լինծի սպասեցին, որպէս զի զիս կոր-
սլոցնեն,

Բայց եռ քու վկայութիւններդ միտքս պիտի բերեմ:

96 Ամէն կատարելութեան վերջը տեսայ.

Քու պատուիրանդդ շատ ընդարձակ է:

Մ Է Մ

97 Ո՛րչափ կը սիրեմ քու օրէնքդ.

Այն է ամէն օր իմ մտածութիւնս:

98 Քու պատուիրանքներդ զիս իմ թշնամիներէս իմաս-
տուն ըրին,

Քանդի անոնք միշտ իմ քովս են:

99 Իմ բոլոր ուսուցիչներէս աւելի համարեղ եղայ,
Վասն զի քու վկայութիւններդ իմ մտածու-
թիւնս են:

100 Ծերերէն աւելի իմաստուն եղայ,

Վասն զի քու հրամաններդ պահեցի:

101 Ամէն գէշ ճամիսյէ իմ ոտքերս եռ քաշեցի,
Որպէս զի քու խօսք պահեմ:

102 Քու գատառառններէդ ջասարեցայ,

Վասն զի դուն սորվեցուցիր ինձի:

103 Ո՛րչափ քաղցը է քու խօսքդ իմ քիմքիս.
Մեղրէն աւել առաջ է իմ բերնիս:

104 Քու հրամաններովդ իմաստուն եղայ,
Անոր համար ստութեան ամէն ճամբան ատեցի.

Ն Ո Ւ Ն

105 Քու խօսքդ իմ ոտքերուս ճրագ է,

Ու իմ շատիղներուս լոյս:

106 Երդում ըրի ու պիտի կատարեմ,

Որպէս զի քու արդար գատառառններդ պահեմ:

107 Շատ նեղացայ.

Ու Տէր, կենդանացուր զիս քու խօսքիդ համեմատ:

108 Ճիմա իմ բերնիս կամաւոր զոհելու ընդունէ, ով
Տէր,

Ու քու գատառառններդ արվեցուր ինծի:

109 Իմ հոգիս ամէն ժամանակ ափիս մէջ է,
Բայց քու օրէնքդ չէմ մունար:

110 Ամրարիշտները պահպայթ լարեցին լինծի համար,
Բայց եռ քու հրամաններէդ չմղողեցայ:

111 Քու վկայութիւններդ յաւիտեան ինծի ժառան,
Գութիւն առի,
Վասն զի անոնք իմ սրտիս ցնծութիւնն են:

112 Խոնարհեցուցի իմ սիրաս, որպէս զի քու կանոններդ
կատարեմ:
Յաւիտեան մինչեւ վերջը

Մ Ա Մ Է Խ

113 Երկմիտնները տաեցի,

Բայց քու օրէնքդ սիրեցի:

114 Իմ սպառէնս ու սապարա դուն ես,
Քու խօսքիդ յուսացայ:

115 Ետ քաշուեցէք ինձմէ, ով չարագողձներ,
Վասն զի եռ իմ Ասուծոյս պատուիրանքները պիտի
պահէմ:

116 Պահպանէ զիս քու խօսքիդ համեմատ, որպէս զի
ապրիմ.

Եւ զիս իմ յոյսէս մի ամիցներ:

117 Զօրոցուր զիս որպէս զի ապրիմ,

Ու միշտ քու կանոններուդ ուշադրութիւն ընեմ:

118 Անորդեցիք այն ամէնը որոնք քու կանոններէդ խո-
տորեցան,

Քանոնի անոնց նենդութիւնը սուտ է:

119 Դուն Գրտավէրս «*կղկղանք կը համարիս» երկրի բո-
լու ամրարիշաները.

Անոր համար ես քու վկայութիւններդ կը սիրեմ:

120 Խմ՝ մարմինս քու աչէդ գողաց,
Ու ես քու դատաստաններէդ վախցոյ:

Ա Յ Ի Ն

121 Իրաւունք ու արդարութիւն ըրի.

Զիս իմ՝ նեղիչներուս մի մատներ:

122 Քու ծառապիդ բարութեան համար երաշխաւոր
եղիք.

Ամբարտաւունները չչարստահարեն զիս:

123 Խմ՝ աչքերս նստալեցան քու փրկութեանդ համար
Ու քու արդարութեանդ խօսքին համար:

124 Ըսէ քու ծառապիդ քու սղզրմութեանդ համեմատ,
Եւ քու կանոններդ սորվեցուր ինձի:

125 Ես քու ծառապիդ եմ, իմաստուն ըրէ զիս,
Որպէս զի քու վկայութիւններդ ճանչնամ:

126 Տէրոջը բան տեսնելու ժամանակն է,
Վասն զի քու օրէնքդ խափանեցին:

127 Անոր համար քու պատուիրանքներդ
Ոսկիէն ու ազնիւ ասկիէն աւելի սիրեցի:

128 Ուստի ամէն բանի վրայավ պարուէրած +ու բոլոր
Հրամաններդ ուղիղ կը համարիմ,
Ու ստութեան ամէն ճամբան կ'ատեմ:

*կայ, կղկղանքի պէս մերժեցիք

Փ է

129 Քու վկայութիւններդ զարմանալի են.

Անոր համար իմ անձս զանոնք կը պահէ:

130 Քու խօսքերուդ յայսանութիւլ ըստ կու տայ,
Ու միտականները իմաստուն կ'ընէ:

131 Խմ՝ բերանս բացի ու հեւացի,
Վասն զի քու պատուիրանքներուդ յանկացոյ.

132 Խնձի նոյէ ու սղզրմէ ինձի,
Խնչպէս սովորաբար կ'ընէ քու անունդ սիրովներուն:

133 Խմ՝ գնացքներս հաստատէ քու խօսքիդ մէջ,
Ու ընտա անօրէնութիւն մը չափէ ինձի:

134 Փրկէ զիս մորդոց բանութենէն,
Եւ քու հրամաններդ պիտի պահէմ:

135 Երեսու փայլեցուր քու ծառապիդ վրոյ,
Ու սորվեցուր ինձի քու կանոններդ:

136 Ջուրերու առուներ կ'իջնեն իմ՝ աչքերէս,
Վասն զի ժարդինի քու օրէնքդ չպահէցին:

Ց Ա Տ Ե

137 Արդար ես դուն, ոլ Տէր,

Եւ քու դատաստաններդ սւղեղ են:

138 Քու պատուիրած վկայութիւններդ
Արդար ու խիստ ճշմարիտ են:

139 Խմ՝ նախանձս զիս մաշեց,
Վասն զի իմ՝ թշնամիներս քու խօսքերդ մոռցան:

140 Քու խօսքդ խիստ մաքուր է,
Անոր համար քու ծառապի զանիկա կը սիրէ:

141 Ես ցած ու անարդուած եմ՝

Ը է ն

- Բոյց քու հրամաններդ չմոռցայ:
- 142 Քու արդարութիւնդ յաւիտենսկան արդարութիւնն է,
- Ու քու օրէնքդ ճշմարտութիւն է:
- 143 Նեղութիւն ու վեշտ զիս գտան,
- Բոյց քու պատուիրանքներդ իմ ուրախութիւնն են:
- 144 Քու վկայութիւններուդ արդարութիւնը յաւիտեան է.
- Եմաստուն ըրէ զիս, ու պիտի ապրիմ:

Գ Օ Ֆ

- 145 Բոլըր պատվ աղաղակեցի,
- Ու Տէր, պատասխան տուր ինծի, ու քու կանոններդ պիտի պահէմ:
- 146 Քեղի աղաղակեցի, փրկէ զիս,
- Եւ քու վկայութիւններդ պիտի պահէմ:
- 147 Կանուխ ելսյ արշալցյին ու աղաղակեցի.
- Քու խօսիդ յուսացյ:
- 148 Գէլքունա պահէրէն տաւաջ լոցուեցան իմ աչքերս.
- Քու խօսերուդ վրոյ մտածելու համար:
- 149 Խմ ձայն լսէ քու սղորմութեանդ համեմատ.
- Ու Տէր, քու դաստաստաններուդ համեմատ կենդամնցուր զիս:
- 150 Անօրէնութեան չեաեւողները մօտեցան.
- Անոնք քու օրէնքէդ հեռացան:
- 151 Ու Տէր, դուն մօտ ես,
- Ու քու բոյր պատուիրանքներդ ճշմարտութիւն են:
- 152 Առաջուընէ իմացած եմ քու վկայութիւններէդ,
- Զորոնք յաւիտեան հաստատեցիր:

Շ Ի Ն

- 153 Տես իմ խղճութիւնո ու զիս փրկէ,
- Վասն զի քու օրէնքդ չմոռցայ:
- 154 Խմ իրաւունքս պաշտպանէ ու փրկէ զիս.
- Քու խօսիդ համեմատ կենդամնցուր զիս:
- 155 Փրկութիւնը հեռու է ամբարիշուններէն,
- Վասն զի քու կանոններդ չխնդրեցին:
- 156 Ով Տէր, քու գթութիւններդ շատ են.
- Քու դաստաստաններուդ համեմատ կենդամնցուր զիս:
- 157 Հատ են իմ հալածիչներս ու թշնամիններս,
- Բոյց ես քու վկայութիւններէդ չխսարեցայ:
- 158 Անօրէնները տեսոյ ու զզուեցայ,
- Վասն զի անոնք քու խօսիդ չէին պահէր:
- 159 Նայէ որ քու հրամաններդ կը սիրեմ.
- Ու Տէր, քու ողբրմութեանդ համեմատ կենդամնցուր զիս:
- 160 Քու խօսիդ *սկիլլը ճշմարտութիւն է,
- Ու քու բոյր արդար դաստաստաններդ յաւիտեան են:

*Լուժ բովանդակութիւնը

Բայց քու օրէնքդ սիրեցի:

164 Օրը եօմը անգամ՝ կ'օրչնեմ՝ քեզ,

Քու արդար դատաստաններուդ համար:

165 Քու օրէնքդ սիրովներուն շատ խաղաղութիւն կայ,
Ու անոնց գոյթակը լութիւն շպլար:

166 Ոլ Տէր, քու փրկութեանդ սպասեցի,
Եւ քու պատուիբանքներդ կատարեցի:

167 Իմ անձո քու վկայութիւններդ պահեց,
Ու ես զաննիք շատ կը սիրեմ:

168 Քու հրամաններդ և քու վկայութիւններդ պահեցի,
Վասն զի իմ բոլոր ճամբաններս քու առջեւդ են:

Դ Ա Վ

169 Ոլ Տէր, թող իմ աղաղակս քու առջեւդ ճամբանայ.
Քու խօսքիդ համեմատ իմաստուն ըլէ զիս:

170 Թող իմ աղաղանքս քու առջեւդ ելլէ.
Քու խօսքիդ համեմատ փրկէ զիս:

171 Իմ շրթունքներս օրչնութիւն պիտի բղեն,
Վասն զի քու կանոններդ սորվեցուցիր լնծի:

172 Իմ լեզուս քու խօսքդ պիտի պատճե,
Վասն զի քու բոլոր պատուիրանքներդ արդար են:

173 Թող քու ձեռքդ ինծի օգնական ըլլայ,
Վասն զի քու հրամաններդ ընարեցի:

174 Ոլ Տէր, քու փրկութեանդ ցանկացայ,
Ու քու օրէնքդ իմ ուրախութիւնն է:

175 Թող իմ անձո ապրի ու քեզ օրչնէ,
Եւ քու գատաստաններդ օգննեն լնծի:

176 Կորուած ոչխարի պէս մարմեցայ.
Փնտուէ քու ծառադ, վասն զի քու պատուիրանք-
ներդ չմոռցայ:

ՍԱՂՄՈԽ ՃԻՒ

Աստիճաններուն երգը:

1 Իմ նեղութեանս մէջ Տէրոջը աղաղակեցի,

Ու անիկա լնծի զատասկան տուտաւ:

2 Ոլ Տէր, փրկէ իմ անձս սուտ շրթունքներէն
Ու նենդաւոր լեզուն:

3 *Ոլ նենդաւոր լեզու, քեզի ի՞նչ տրուի,
Եւ քեզի ի՞նչ աւելցուի:

4 Զօրաւոր մարդուն սուր նետերը
Ու գիշին կայժերը:

5 Վայ լնծի, որ Մասքի մէջ պանդուխս եղսց,
Եւ կերպի վրաններուն քովերը ընակեցայ:

6 Շատ ժամանակ իմ անձս բնակեցաւ
Խաղաղութիւնը ասոսղներուն հետո
7 Ես խաղաղասէր էի.

Բայց երբ կը խօսէի, անոնք կոփւ վ' ընելի:

ՍԱՂՄՈԽ ՃԻԱ

Աստիճաններուն երգը:

1 Աչքերս գէպի լեռները պիտի վերցնեմ,

Ուրկէ իմ օգնութիւնս պիտի գայ:

2 Իմ օգնութիւնս Տէրոջմէն է,
Որ երկինքը ու երկիրը սատղծեց:

3 Անիկա քու սորդ չդողացնէ,

*Կամ, Նենդաւոր լեզուն քեզի ի՞նչ կու տայ ու քեզի
ի՞նչ կ'աւելցնէ

- Ու քու Պահապանդ չքնանոյ:
- 4 Ա,Հա Խարցէլի Պահապանը
Պիտի չմրտափէ ու պիտի չքնանոյ:
- 5 Տէրը քու պահապանդ է:
Տէրը քու աշ ձեռքիդ քով քու հովանիդ է:
- 6 Ցորեկը արեգակը քեզ պիտի չզարնէ:
Ոչ աշ գեղերը՝ լուսինը:
- 7 Տէրը քեզ ամէն չարէն պիտի պահպանէ:
Քու անձդ պիտի պահպանէ:
- 8 Տէրը քու ելելդ ու մոնելդ պիտի պահպանէ
Ասկէ ետե մինչեւ յաւիտեան:

ՍՈՂՄՈՍ ՃԻՒ

Դաւիթի աստիճաններուն երգը:

- 1 Պ'ուրապանոյի երբ ինծի կ'լսէին,
Տէրոջը առանը երթանք:
- 2 Մեր ոսքերը քու դաներուդ մէջ կոյնեցան,
Ով Երուսաղէմ:
- 3 Երուսաղէմ այսպէսէ քաղաքի մը պէս շնուած է,
Որ ինքնիրեն միւսորուած է.
- 4 Որ ցեղերը Տէրոջը ցեղերը, հոն կ'ելլեն
Խարսյէլի պատուիրուծին ուր,
- Տէրոջը անուանը գոհութիւն մատուցանելու համար:
- 5 Վասն զի հոն դրաւած են դատաստանի աթոռները
Դաւիթի տանը ամբուները:
- 6 Երուսաղէմի խաղաղութիւնը ինքրեցէք.
Թողլ յաջողին անոնք որ քեզ կը սիրեն:
- 7 Խաղաղութիւն թողլ ըլլայ քու պարիսպներուդ մէջ,
Ու յաջողութիւն՝ քու պալատներուդ մէջ:

- 8 Իմ եղբայրներուս ու լնկելներուս համար
Հիմա պիտի լսեմ, Խաղաղութիւն ըլլայ քու մէջդ:
- 9 Մէր Տէր Ա,ստուծոյն տանը համար
Քեզի բարութիւն պիտի ուղեմ:

ՍՈՂՄՈՍ ՃԻՒ

Աստիճաններուն երգը:

- 1 Փեզի կը լսարձացնեմ իմ աչքերս,
Ու երկնակի մէջ բնակող:
- 2 Ա,Հա ինչպէս ծառաներուն աչքերը իրենց տէրոջը
Ճեռքին հետային:
Ու ինչպէս աղափինին աչքերը իր արկնօջ ձեռքին,
Այնպէս մեր աչքերը Տէրոջը, մեր Ա,ստուծոյն, ուրուի
նային,
Մինչեւ մեզի ողորմի:
- 3 Ողորմէ մեզի, ով Տէր, ողորմէ մեզի,
Վասն զի խաս լցուեցանք անարդանկապը:
- 4 Խիստ լցուած է մեր անձը հանգիստ վայելողներուն
Խարսյէլիքալը
Ու ամբարտաւոններուն անարդանքալը:

ՍՈՂՄՈՍ ՃԻՒ

Դաւիթի աստիճաններուն երգը:

- 1 Եթէ Տէրը մեզի հետ չըլլար,
Հիմա Խարսյէլ թողլ ըսէ,
2 Եթէ Տէրը մեզի հետ չըլլար,
Երբ մարդիկ մեր վրայ ելան,
3 Այն տանը ողջ ողջ պիտի կլէին մեզ,

- 1 Երբ անոնց բարկութիւնը մեր վրայ բորբոքած էր.
- 2 Այս ատեն չուրբերը մեր պիտի ընկղզմէին,
- 3 Հեղեղը մեր անձերուն վրայէն պիտի անցնէր.
- 4 Այս ատեն հպարտացած ջուրերը
- 5 Մեր անձերուն վրայէն պիտի անցնէին:
- 6 Օրչնեալ ըլլայ Տէրը,
- Որ մեզ անոնց ակւածներուն որս չառաւաւ,
- 7 Մեր անձերը ճնճղւկի պէս որսորդներուն որսգայ,
- թէն ազատեցան.
- Որոդայիթը կոտրեցաւ ու մենք ազատեցանք:
- 8 Մեր օգնութիւնը Տէրոջը անունովն է,
- Որ երկինքն ու երկիրը ստեղծէց:

ՍԱՂՄՈՍ ՃԻԵ

Աստիճաններուն երգը:

- 1 Տէրոջը յուսացողները Սիօն լեռանը պէս են,
Որ չառանիիր, հառա յաւիտեան կը մնայ:
- 2 Խաչեա Ելուսաղէմը լեռներով պատած է,
Նոյնիւ Տէրը իր ժողովարդին չորս կողմն է
Ասկէ ետեւ մինչեւ յաւիտեան:
- 3 Վասն զի ամերիշտին գաւազոնը տրդարներուն վի-
ճակին վրայ պիտի չմնայ,
Որովէս զի արդարները ճեռքերնին անօրէնութեան
չերկնցնեն:
- 4 Ու Տէր, բարիք բրէ բարիներուն
Ու սոսով ուղեղներուն:
- 5 Ստկայն զմոննք որ իրենց ծուռ ճամբաններուն մէջ
կը մնջըին,

- Տէրը պիտի *կորսնցնէ անօրէնութիւն գործողներուն
հետո:
- Խաղաղութիւն ըլլայ Խրամէլի վրայ:

ՍԱՂՄՈՍ ՃԻԶ

Աստիճաններուն երգը:

- 1 Երբ Տէրը Սիօնի գերութիւնը դարձուց,
†Երազ տեմազներուն՝ պէս եղանք:
- 2 Այս ժամանակ մեր բերանը խնդութիւնով լեցուե-
ցաւ,
Ու մեր լեզուն ցնծութիւնով.
Այս ժամանակ չեթանաներուն մէջ ըսին թէ
Տէրը տանց համար մէծ բաներ ըրաւ:
3 Տէրը մեզի համար մէծ բաներ ըրաւ,
Ու մենք ուրախացանք:
4 Ու Տէր, գարձուր մեր գերութիւնը
Հալասի առուներուն պէս:
5 Անոնք որ արցունքով կը ցանեն,
Ցնծութիւնով կը հնձեն:
6 Ան որ լուրջ կ'երթայ,
Ցանելու սերմը տանելով,
Անշուշտ ցնծութեամբ ետ պիտի դառնայ
Իր ցուկնէ խուրձերը բերելով:

*ԵԲԻ. տանիք

†Կ-Ի. Առողջացողներուն

ՍԱՂՄՈՍ ՃԻՒ

Սողոմնինի աստիճաններուն երգը:

- 1 Եթէ Տէրը չըլնէ տունը,
Զուր տեղ կ'աշխասաին անոր շինողները.
Եթէ Տէրը չպահպանէ քաղաքը,
Զուր տեղ կը հակեն պահպանները;
- 2 Պարապ բան է ձեզի համար կահոււի ելելը և ուշ
հանգչիը

Ու ցաւով հաց ուտելը:
Արդարեւ անիկոս իր սիրելին քուն կու տայ:
3 Ա.Հ.ա աղաքը Տէրոջը ժառանգութիւնն են.
Որսվայնի պատուղը անոր *պարգեւն է:
4 Ինչպէս են նետերը զօրուարին ձեռքին մէջ,
Այնպէս են երիտասարդներուն տղաքը:
5 Երանի՛ այն մարդուն,
Որ իր կապարձը անոնցմնվ լեցուց.
Երբ դրանք մէջ [թշնամիներուն հետա խօսելու ըլլան,
Պիտի չամշնան:

ՍԱՂՄՈՍ ՃԻԾ

Աստիճաններուն երգը:

- 1 Երանի՛ այն ամէնուն՝ որոնք Տէրոջմէ կը վախնան,
Ու անոր ճամբաններուն մէջ կը քայեն:
- 2 Վ.ասն զի քու ձեռքիդ աշխատութիւնը պիտի ուտես.
Երանի՛ է քեզի, ու քեզի բարի պիտի ըլլայ:
- 3 Քու կինդ պաղպակեր որթի մը պէս պիտի ըլլայ

*կոյժ, վարձքն

- Քու տանդ ներսիդերը,
Ու քու որդիներդ ձիթենիի առւնկերու պէս
Քու սեղանիդ չըսո կողմը:
4 Ա.Հ.ա Տէրոջմէն վախցող մարդը
Այսպէս պիտի օրհնուի:
5 Տէրը քեզ Արօնէ օրհնէ,
Ու երուսալէմի բարութիւնը տեսնես
Քու կեանքիդ բոլոր օրերուն մէջ.
6 Եւ քու որդւոցդ որդիները տեսնես
Խաղաղութիւն ըլլայ Խարսչէի վրայ:

ՍԱՂՄՈՍ ՃԻԾ

Աստիճաններուն երգը:

- 1 Հիմա՝ Խարսչէլ թող լսէ,
Իմ մանկութենէս ի վեր շատ անդամ՝ զիս նեղեցին.
2 Իմ մանկութենէս ի վեր շատ անդամ՝ զիս նեղեցին,
Բայց ինձի չյաղթեցին:
- 3 Հերկողները իմ կանակս վրայ հերկեցին,
Ու իրենց ակօները երկնցուցին,
- 4 Տէրը արդար է.
Անիկս ամիստիշտներուն չուանները կտրտեց:
- 5 Արօնը ասողներուն ամէնը
Պիտի ամշնան ու ետ դաւանան.
6 Տանիքի վրայի խոտին պէս պիտի ըլլան,
Որ գեռ չփրցուած կը չորնայ.
7 Որսվ հնձողը չկրնար իր ձեռքը լեցնել,
Ոչ ող խուրձ կապողը իր գոգը.
8 Եւ անցնողները չեն ըսեր թէ

Տէրոջը օրհնութիւնը ձեր վրայ ըլլայ,
Ու ձեզ Տէրոջը անունովը կ'օրհնենք:

ՍԱՂՄՈՍ ՃԼ

Աստիճաններուն երգը:

- 1 **Խ**որունկ տեղերէն քեզի կանչեցի, ոլ Տէրը
- 2 Ոլ Տէր, իմ ձայնս լսէ.
Քու ականջներդ թող մտիկ ընեն իմ ազօթքիս ձայնը
- 3 Ոլ Տէր, եթէ անօրէնութիւնները յիշելու ըլլաս,
Տէր, ո՞վ կնայ կնառալ:
- 4 Բայց քու քսդդէ է թողաթիւնը,
Որպէս զի քեզմէ վախնան:
- 5 Ես Տէրոջը կը սպասեմ, իմ անձն կը սպասէ,
Ու անոր խօսքին կը յուսասմ:
- 6 Աւտուան սպասողներէն, աւտուան սպասողներէն
աւելի
Իմ անձն Տէրոջը է սուսուէ:
- 7 Խարսյէլ թող Տէրոջը յուսայ,
Վասն զի Տէրոջը քով ողբանութիւն կայ.
Ու անոր քով շատ փրկութիւն կայ.
- 8 Եւ անիկս պիտի փրկէ Խարսյէլը
Իր բազոր անօրէնութիւններէն:

ՍԱՂՄՈՍ ՃԼԱ

Դաւիթի աստիճաններուն երգը:

- 1 **Ո**լ Տէր, իմ սիրոս չդառողացաւ,
Եւ իմ աչքերս չբարձրացան.
Ու ես մժամեծ բաներու մէջ,

- Եւ ինծմէ բարձր բաներու մէջ չբալեցի:
2 Արդարեւ իմ անձս հանդարանեցուցի ու հանգստա-
ցուցի
Իր մօրը կաթէն կարուած աղու մը պէս.
Իմ անձս կաթէն կարուած աղու մը պէս է:
3 Խարսյէլ թող Տէրոջը յուսայ
Ասկէ ետե մինչեւ յաւիտեան:
- ՍԱՂՄՈՍ ՃԼԲ**
- Աստիճաններուն երգը:
- 1 **Պ**աւիթի համար յիշէ, ոլ Տէր,
Անոր բազոր նեղութիւնը.
 - 2 Որ երդումը ըբաւ Տէրոջը,
Եւ ուխտ գրաւ Յակոբի Զօրաւորին,
3 Հուլչէ թէ իմ ասնս բնակարանը չմտնեմ,
Ու իմ փատճ անկողինիս վրայ չելլեմ,
4 Թէ իմ աչքերուս քուն՝
Եւ արեւելանունկներուս նիրհում չտամ,
5 Մինչեւ Տէրոջը համար, տեղ մը գտնեմ,
Ու Յակոբի Զօրաւորին համար բնակարան,
6 Աչա անոր վրայով լսեցինք Եփրամոյի մէջ,
Եւ զանիկա գտանք անստառի դաշտերուն մէջ,
7 Մանենք անոր բնակարանները,
Ու երկպագութիւն ընենք անոր պատուանդանին
քով։
 - 8 Քու հանգստութեանդ թէլլ ելիք, ոլ Տէր,
Դուն ու քու զօրութեանդ տապանակը,
9 Քահանաներդ թող արդարութիւն հագնին,
Եւ քու աւրբերդ ցնծան։

- 10 Գու Դաւեիթ ծառայիդ համար
Անդին մի գարձներ քու օծեալիդ երեաը;
- 11 Տէրը երգում ըրտու Դաւեիթի ճշմարտութեամբ,
Ու ես չգումանար անկէ,
Թէ Գու որսվայնիդ պտուզէն
Գու ալթուփդ վրայ պիտի նստեցնեմ;
- 12 Եթէ քու որդիներդ պահեն իմ ուխտա ու վկայու-
թիւններս
Զորնկ աննց պիտի սորվեցնեմ,
Այս որդէն աննց որդիներն ալ
Գու ալթուփդ վրայ պիտի նստին յաւիտեամն;
13 Վասն զի Տէրը Ախօնը ընտրեց,
Եւ զանիկա իրեն բնակութեան համար ուղեց,
14 Ըստը, Այս է յաւիտեան իմ հանգիստա.
Ասոր մէջ պիտի բնակիմ, վասն զի սափեա ուղեցի,
15 Անոր պաշարը առատարար պիտի օրհնեմ,
Ու անոր աղքատաները հոյցով պիտի կշացնեմ,
16 Եւ անոր քահանաներուն փրկութիւն պիտի հագ-
ցընէմ.
Ու անոր սուրբերը ուրախութեամբ պիտի ցնծան:
17 Այն աեղը Դաւեիթի եղջեր պիտի բուայնեմ,
Ու ճրադ պիտի պատրաստեմ իմ օծեալիդ համար:
18 Անոր թշնամիներուն ամօթ պիտի հագցնեմ,
Բայց անոր վրայ իր թագը պիտի ծաղկի:

ՍՈՂՄՈՍԱՅ ՃԼԳ

Դաւեիթի աստիճաններուն երգը

- 1 Անհամ ո՛քասակ բարի ու ո՛քասակ վայելուչ է
Որ եղայլները իրաւու հետ միաբանութեամբ բնակին:

- 2 Այն աղնիւ իւղին պէս է,
Որ գլուխն վայշէն մօրուքին լրայ,
Աչարոնի մօրուքին վրայ, վաղեց,
Ու մինչև անոր զգեստներուն ծայրը իջաւ:
3 Ախօնի լեռներուն վրայ իջած
Հերմոնի շաղին պէս է.
Վասն զի Տէրը հնա հաստատեց օրհնութիւնը
Ու կեանքը մինչև յաւիտեան:

ՍՈՂՄՈՍ ՃԼԴ

Աստիճաններուն երգը:

- 1 Աղե, օրհնեցէք Տէրը, ով Տէրոջը բոլոր ծա-
ռաները,
Որ Տէրոջը առանը կը կենաք գիշերները:
- 2 Սուրբ տեղը ձեռքերնիդ վերցուցէք,
Ու օրհնեցէք Տէրը:
- 3 Երկինը ու երկիրը սուեղծող Տէրը
Թող օրհնէ քեզ Ախօնէ:

ՍՈՂՄՈՍ ՃԼԵ

- 1 Անէլուիա Օրհնեցէք Տէրոջը անունը,
Օրհնեցէք, ով Տէրոջը ծառաները,
- 2 Որ Տէրոջը առանը կը կենաք,
Մեր Աստիճանի առանը սրահներուն մէջ:
- 3 Օրհնեցէք Տէրը, վասն զի Տէրը բարի է.
Սաղման լակը անոր անսանը, վասն զի քաղցր է:
- 4 Վասն զի Տէրը իրեն համար ընտրեց Յակուը,
Ու խրայէլը իրեն սեպհական ժուլէ-բր ըլլալու:
- 5 Վասն զի ես իմացայ, որ Եհովա մեծ է,

- Ու մեր Տէրը՝ բոլոր ասատաւածներէն:
 6 Տէրը ամէն ինչ որ ուղեց՝ ըրաւ,
 Երկնքի ու երկի մէջ,
 Ծովերուն ու բալոր անդունդներուն մէջ:
 7 Երկի ծայրերէն շոգիներ կը հանէ,
 Անձրեւի համար փոյլակներ կը շինէ,
 Ու հող կը հանէ իր շտեմարաններէն:
 8 Անիկան Եգիպտակի առջինեկները զարկաւ
 Մարդէ մինչև անստուն.
 9 Նշաններ ու հրաշքներ զրկեց քու մէջդ, ով Եգիպտաս,
 Փարաւանի ու անոր բոլոր ծառասներուն վրայ:
 10 Շատ ազգեր զարկաւ,
 Ու զրիդ թագաւորմեր ապաննեց.
 11 Ամօրհացւոց Սեհսն թագաւորը,
 Բաստանի Ոդդ թագաւորը,
 Եւ Քանանու բալոր թագաւորութիւնները.
 12 Ու անոնց երկիրը ժառանգութիւն տուաւ,
 Իր Խարայէլ ժողովարդին ժառանգութիւն:
 13 Ով Տէր, քու անտւնդ մինչև յաւիտեան է հայ.
 Ով Տէր, քու յիշատակի ազգէ մինչև ազգ:
 14 Վասն զի Տէրը իր ժողովարդը կը դատէ,
 Եւ իր ծառասներուն կ'ողորմէ:
 15 Հեթանոսներուն կուռքերը արծաթ ու սակի են,
 Մարդու ձեռքի գործեր են.
 16 Բերան ունին, բայց չեն խօսիր.
 Աչքեր ունին, բայց չեն տեսներ.
 17 Ականջներ ունին, բայց չեն լսեր,
 Ու շունչ չկայ անոնց բերնին մէջ:
 18 Անոնց նման կ'ըլլան զանոնք շինողները
 Ու բոլոր անոնց յուսացողները:

- 19 Ով Խարայէլի տունը, օրչնեցէք Տէրը.
 Ով Ա.Հարոնի տունը, օրչնեցէք Տէրը.
 20 Ով Ղեւի տունը, օրչնեցէք Տէրը,
 Ով Տէրոջմէն վափառղներ, օրչնեցէք Տէրը:
 21 Օրչնեալ Ալաս Տէրը Արօնէ,
 Որ Երուսաղէմի մէջ կը բնակի: Ալէլուիտ:

ՍԱՂՄՈՍ ՃԼԶ

- 1 Գոհացէք Տէրոջմէն, վասն զի բաղի է.
 Վասն զի անոր ողբարմութիւնը յաւիտեան է.
 2 Գոհացէք ասատաւածներուն Աստուծմէն,
 Վասն զի անոր ողբարմութիւնը յաւիտեան է.
 3 Գոհացէք աէրերուն Տէրոջմէն,
 Վասն զի անոր ողբարմութիւնը յաւիտեան է.
 4 Մինտէ մեծ հրաշքներ ընտղէն,
 Վասն զի անոր ողբարմութիւնը յաւիտեան է.
 5 Երկինքը իմաստութեամբ ստեղծողէն,
 Վասն զի անոր ողբարմութիւնը յաւիտեան է.
 6 Երկիրը ջուրերուն վրայ տարածողէն,
 Վասն զի անոր ողբարմութիւնը յաւիտեան է.
 7 Մինտէ լուսաւորներ ստեղծողէն,
 Վասն զի անոր ողբարմութիւնը յաւիտեան է.
 8 Արեգակը՝ սրբէս զի ցորեկին Եշիէ,
 Վասն զի անոր ողբարմութիւնը յաւիտեան է.
 9 Լուսինը ու աստղերը՝ սրպէս զի գիշերին իշխեն,
 Վասն զի անոր ողբարմութիւնը յաւիտեան է.
 10 *Եգիպտացւոց անդրանիկները՝ զաղնողէն,

*ԵՅՇ. Եգիպտացիները իրենց անդրանիկներուն մէջ

- Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 11 Ու Խորպիչը անոնց մէջէն հանողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 12 Հզօր ձեռքով ու ասարածուած բազուկով,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 13 Կարմիր ծալիք երկուքի բաժնողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 14 Ու Խորպիչը անոր մէջէն անցընողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 15 Եւ Փարաւանիլ ու անոր զօրբերը Կարմիր ծալիուն մէջ
 թօթվաղէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 16 Իր ժողովուրդը անապատին մէջ պարսպնողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 17 Մեծ թագաւորներ զարնողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 18 Ու զօրեղ թագաւորներ սպանողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 19 Ամօրհացւոց Անհոն թագաւորը,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 20 Ու Բասանին Ոլդ թագաւորը,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 21 Եւ անոնց երկիրը ժառանգութիւն տուողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 22 Իր Խորպիչը ժառային ժառանգութիւն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 23 Մեր խնարհութեանը մէջ մեղ յիշողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 24 Ու մեր թշնամիներէն մեղ փրկողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.

- 25 Բոյրը մարմինի հաց տուողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 26 Գոհացէք երկինքի Աստուծմէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է:

ՍՈՂՄՈՍ ՃԼՀ

- 1 Բարելոնի գետերուն քով հոն կը նստէլինք,
 Ու Ախօնը միտքերնիս բերելով կու լսյինք:
- 2 Անոր մէջ ուռիներուն վասյ
 Կախեցմնիք մեր քնարները.
- 3 Վասն զի մեղ գերի ընտները
 Հնն մեղմէ երբ մը խնդրեցին,
 Ու մեր *կողապահները ու բախութիւն,
 Բաւելէ, Երգեցէք մեզի Ախօնի երգերէն:
- 4 Տէրոջը երգը ինչպէս երգենք
 Օտար երկրի մէջ:
- 5 Ով Երուասաղէմ, ելթէ քեղ մոռնամ՝,
 Թող իր աջ ձեռքս էր պարծոն մոռնայ.
- 6 Թող իր լեզուս իր քիմքիս փակչի,
 Ելթէ քեղ չյիշեմ,
 Ելթէ Երուասաղէմի իր գլխաւոր ու բախութենէս
 Աւելի մեջ չամարիմ:
- 7 Ցիլէ, ով Տէր, Եղովմի որդիները
 Երուասաղէմի օրուանը մէջ,
 Որոնք կըսէին, Փացուցէք, Փացուցէք
 Մինչև անոր հիմը:

*Կամ. գերեվարները

- 8 Ով Բարեկընի *աւերսղ աղջկելը,
Երանի՛ անոր՝ որ քեզի կը հաստուցանէ
Մեղի ըրած գործերուդ փոխարէնը.
9 Երանի՛ անոր՝ որ քու զաւակներդ կը բռնէ
Ու քարի կը զարնէ:

ՍԱՂՄՈՍ ձևի

Սողմա Դաւթի:

- 1 Փեզի գոհութիւն պիտի մաստուցանեմ իմ՝ բոլոր
արագիւն.
†Ասսուածներուն առջեւ քեզի սաղման պիտի երգեմ:
2 Երկրպագութիւն պիտի ընեմ՝ գէպի քու առուրբ
առաջրդ:
Եւ քու անսունդ գոհութիւն պիտի մաստուցանեմ
Քու ողբրմութեանդ ու ճշմարտութեանդ համար.
Վասն զի քու բոլոր անունեդ վեր մեծցուցիր քու
խօսքի:
3 Կանչած օրս պատասխան տուիր ինձի,
Իմ՝ անձիս մէջ զօրութիւնով զիս ուժովցուցիր:
4 Ով Տէր, երկրի բոլոր թագաւորները քեզի գոհութիւն
պիտի մաստուցանեն,
Երբ քու բերնեդ խօսքերը լսեն.
5 Ու Տէրոջը ճամկաներուն մէջ պիտի երգեն.
Վասն զի Տէրոջը փառքը մէծ է:

*կամ, աւրուելու. Ես. ժգ. 1, 6, ևն իւ. 1: Երեմ.
իւ. 12: ժ. 2:

†կամ. Հըեշտակներուն, չամ, Դաստաւորներուն, և չամ,
Աստուծոյ

- 6 Թիւպէտ Տէրը բարձր է, բայց խնարհը կը տեսնէ,
Ու բարձրամիտը հետուէն կը ճանչնայ:
7 Եթէ նեղութեան մէջ ալ քալեմ,
Գուն զիս պիտի կենդանացնես.
Իմ՝ թշնամիներուս բարկութեանը դէմ
Քու ձեռքդ պիտի երկնցնես,
Եւ քու ալ ձեռքդ զիս պիտի փրկէ:
8 Տէրը պիտի գործէ լնծի համար.
Ով Տէր, քու ողբրմութիւնդ յափտեան է.
Քու ձեռքիդ գործերը երեսէ մի ձգեր:

ՍԱՂՄՈՍ ձևի:

Գլխաւոր երաժշտին, Սաղմա Դաւթի:

- 1 Ով Տէր, զիս քննեցիր ու ճանչցարտ
2 Գուն զիտես իմ՝ նստիլս ու ելլելս,
իմ՝ խորհուցոց հեռուանց կ'իմանսատ:
3 Իմ՝ շատիլս ու պատկիլս կը քննես,
Ու իմ՝ բոլը ճամիւներս զիտես:
4 Վասն զի բնաւ խօսք չկայ իմ՝ լեզուիս վրայ,
Աչա, ով Տէր, գուն ամենը զիտես:
5 Իմ՝ ետեւէս ու առջեւէս զիս պաշտրեցիր,
Եւ քու ձեռքդ իմ՝ վրաս դրիր:
6 Այս գիտութիւնը ինձի խիստ զարմանալի է,
Բարձր է ու չեմ կընար հասկնալ զանիկան:
7 Ո՞ւր երթամ՝ քու Հոգիէդ,
Եւ քու երեսէդ ո՞ւր փախչիմ:
8 Եթէ երկներ ելլեմ, գուն հնն ես.
Եթէ դժոխքը անկողինս լնեմ, աչա գուն հնն ես.
9 Ենէ արշալցյանին թեւերը առնեմ,

- իւ ծովաւն վերջի ծայրը բնակիմ,
 10 Հոն ալ քու ձեռքի ինձի պիտի առաջնորդէ,
 Ու քու աջ ձեռքի զիս պիտի բռնէ:
 11 Եթէ ըսեմ, իրաւցինէ խաւարը զիս պիտի ծածկէ,
 Այս արէ՛ գիշելն ալ լցո կ'ըլլայ իմ բոլորակաւ
 12 Մութն ալ քեզի խաւար չէ.
 Հապա գիշերը ցորեկի պէս լուսուոր կ'ըլլայ.
 Խաւարը և լցոր միենոյն բան են ուս արջեր:
 13 Վասն զի գուն սաեղջեցիր իմ երիկամոն պներս,
 Ու իմ մօրս որովայնին մէջ գուն զիս ծածկեցիր:
 14 Կը գոհանամ քեզմէ,
 Որ ահաւոր ու զարմանալի կերպավ սաեղջուեցայ.
 Քու գործերդ զարմանալի են,
 Ու իմ անձս աղէկ զիտէ:
 15 Իմ գոյութիւնս չծածկուեցաւ քեզմէ,
 Երբ գաղոտուկ աեղը շնուեցայ,
 Երկիր խորութիւններուն մէջ + Ճարտարարութեամի
 կաղմուեցայ^{*}:
 16 Քու աչքերդ իմ անկասար կաղմուածքս տեսան.
 Ու անդամներուս բայրը քու գիրքիր մէջ գրուած էին,
 Որոնք ժամանակին պիտի կաղմուելին,
 Երբ գեռ անոնցմէ մէկը չկար:
 17 Ո՛րչափ պատուական են ինձի քու խորհուրդներդ,
 ով Սաստած.
 Ո՛րչափ մեծ է անոնց թիւը:
 18 Երեւ համբեմ զանոնք՝ տառքին շատ էն.
 Երբ արթնամա՞ գեռ քեզի հետ եմ:

- 19 Իրաւցընէ ամբարդիշը պիտի սպաննես, ով Աստ,
 ուած.
 Ուրեմն, ով արիւնահեղ մարդիկ, հետացէք ինձմէ:
 20 Անոնք քեզի գէմ նենդութեամը կը խօսին,
 Ես քու *թշնամիներդ +ու անունդ պարապ տեղ
 կ'առնեն^{*}:
 21 Քեզ ասողները չե՞մ ատեր, ով Տէր,
 Ու քեզի գէմ եղողներէն չե՞մ զզուիր:
 22 Զաննեմ կատարեալ սասելութեամը կ'ատեմ,
 Ես ինձի թշնամին կը համարդիմ^{*}:
 23 Փորձէ զիս, ով Աստուած, ու գիտցիր իմ սիրաւ.
 Զիս քնննէ ու գիտցիր իմ մասձմունքներս,
 24 Եւ նայէ թէ արդեօք չար ճամբու մէջ եմ,
 Եւ զիս գէպի յասկանական ճամբան առաջնորդէ:

ՍԱՂՄՈՍ ՃԽ

Գլխաւոր երաժշտին. Սադմոս Գաւթի:

- 1 Ով Տէր, չար մարդէն զիս փրկէ,
 Ու բանաւոր մարդէն զիս պահէ,
 2 Որոնք սրտենուն մէջ չար բաներ կը մոտածեն,
 Ու ամէն օր կուներու համար կը ժողվուին:
 3 Իրենց լեզուները օձի պէս սրբին.
 Իժի թշն կայ անոնց շրթու նրներուն տակի (Ուշաւ)
 4 Ով Տէր, զիս ամբարդտին ձեռքէն պահէ.
 Զիս բռնաւոր մարդէն պահպանէ,
 Որոնք իմ գնացքներս խսփանելու խորհուրդ լրին:

*կամ, քաղաքներդ անիրաւութեամը կ'առնեն

†ԵԲՐ. նկարակերպեցայ

- 5 Ամերտաւառները ինձի համար գաղտնի որոգայթ ու
չուաններ լրացին.
- Ուսկան փաեցին իւ ճամբաւս վրայ.
- Վարսեր դրին ինձի համար: (Սէլուա)
- 6 Ըստ Տէրոջը, Դուն ես իմ Աստուածա.
- Ու Տէր, լու իմ աղաչակիս ձայնը:
- 7 Ու Տէր Եհովա, իմ փրկութեանս զօրաւթիւնը,
Դուն իմ գլխաւս հօվանի եղար պատերազմին օրը:
- 8 Ու Տէր, ամբարշամին ցանկութիւնները մի տար,
Անոր չար խորհուրդը մի յաջողեր,
Որ ւեւոյ ներ բարձրանան: (Սէլուա)
- 9 Զիս պաշտոնակերուն զլուխը
Իրենց շրմ ուներաւն աշխատաւթիւնը պիտի ծածկէ:
- 10 Վաւած ածուխներ պիտի իյնան անսանց վրայ.
Կրակի մէջ պիտի ձգէ զանանք,
- Ո-խորունկ ջուրերու մէջ, որպէս զի բնաւ վեր չելլեն:
- 11 Չարախօս մարդք երկրի վրայ պիտի չհասասաւի:
Թշուաւութիւնը պիտի որսայ բռնաւոր մարդք,
Որպէս զի զանէտ կործանէ:
- 12 Գիտեմ որ Տէրը դատաստանն պիտի ընէ իւեղձին,
Ո-իրաւունք աղքատներուն.
- 13 Ցիրաւի արդարները քու անունդ պիտի գովեն.
Ուղիղները քու առջեւդ պիտի բնակին:

ՍԱՂՄՈՍՅ ՃԽՈ).

Սադաս Դաթի:

- 1 Ու Տէր, քեզի կր կանչեմ, շուտով հասիր ինձի.
Ականջ գիր իմ ձայնիս երը քեզի կր կանչեմ:
2 Թող իմ աղօթքս խունկի ու- քեզի շիտկուի,

- Ես իմ ձեռքելուս վեր վերցուիլը՝ իրիկուան պատա-
րագին ու-:
- 3 Ու Տէր, պահապան դիր իմ բերնիս,
Ո- իմ շրմունքներուս գուաը պահապանէ:
- 4 Իս պիտա չար բանի ետեւէ խոտորելու մի թողուր,
Որպէս զի անօրէնութիւն գործող մարդոց հետ գէշ
գործեր չընեմ:
- Ու անսանց համագամ կերակուլներէն չուտեմ:
- 5 Արգարը թաղ զիս զարնէ, այն ողպմութիւն է.
Եւ զիս յանդիմանէ, այն գլխու իւղ է.
Իմ գլուխս չմերժէ զանէտ.
- Վան զի անսանց ներդութիւններուն մէջ ալ պիտի
աղօթեմ:
- 6 Երբ անսանց դատաստորները ապառաժներու մէջ ձրգ-
ուին,
Այն աստեն իմ խօսքերս պիտի լսեն, վասն զի քաղցր են:
7 Ինչպէս *չերկողը ու ձեղքողը և ցրուե երկրի վրայ,
Այնպէս մեր ակրոները գերեզմանին բերանը ցիրուցան
եղան.
- 8 Սակոյն, ով Տէր Եհովա, իմ աչքերս գէպ ի քեզ են.
Քեզի յուսացոյ, իմ հոգիս մի մերկացներ:
- 9 Ինձի համար լարաւած որոգայթէն,
Ու անօրէնութիւն գործողներուն վարմերէն զիս
պահէ:
- 10 Ամբարիշտները իրենց ցանցերուն մէջ պիտի իյնան,
Երբ ես բալորովին անցնիմ:

*կամ, քայլ կտրողը

ՍԱՀՄՈՍ ՃԽԻ

- Դաւիթի երգը ու աղօթքը, երբ ինք այլին մէջ էր,
1 Իմ ձայնսվա Տէրաջը կ'աղաղակեմ.
 Իմ ձայնովս Տէրոջը կ'աղաղակեմ;
2 Իմ գանգասա անոր առջեւ կը թափեմ.
 Իմ նեղութիւնս անոր առջեւ կը պատմեմ;
3 Երբ հոգիս իմ մէջս կը մարեր,
 Դաւն իմ շաւիզ գիտցար.
 Իմ քալսժ ճամբաւս մէջ
 Ինձի համար գաղտառկ որդուայթ լարեցին.
4 Նայէ աջ կողմը ու տես,
 Որ բնաւ զիս ճանչցող մը չկայ.
 Ապաւէնը ինձմէ կորառեցաւ.
 Բնաւ մէկը չկայ որ իմ անձին համար հոգ ընէ:
5 Ոլ Տէր, քեզի աղաղակեցի,
 Ու ըսի, Դուն ես իմ ապաւէնս,
 Ես իմ վիճակս կենդանիներուն երկրին մէջ:
6 Ականջ գիր իմ աղաղակիս,
 Վան զի շատ նուասացայ.
 Ազատէ զիս իմ հալածիներէս,
 Վան զի ինձմէ զօրաւոր են:
7 Իմ անձս բանաէն հանէ,
 Որպէս զի քու անուանդ գոհութիւն մատուցանեմ.
 Արդարներ իմ չորս կողմն պիտի պատեն,
 Երբ ինձի բարութիւն ընես

ՍԱՀՄՈՍ ՃԽԻ

Սաղմոս Դաւիթի:

- 1 Ոլ Տէր, լսէ իմ աղօթքս,**
 Ականջ գիր իմ աղաղակիս.
 Պատասիսն տուր ինձի քու ճշմարտութիւնովդ
 Ու քու արդարութիւնովդ:
2 Եւ քու ծառայիր հետ գատասառանի մի մտներ,
 Վան զի բնաւ կենդանի մը պիտի չարդարանայ քու
 առջեւուց:
3 Վան զի թշնամին իմ անձս հալածեց,
 Իմ կեռուս գետինը զարկաւ,
 Զիս շատոնցուլնէ մեռածներուն պէս
 Մութը նատեցուց:
4 Եւ իմ հոգիս ներսիգիս մարեցաւ,
 Իմ միրաս ներսիգիս խռովիցաւ:
5 Առաջուան օրերը կը յիշեմ,
 Քու բոլոր գործերուդ վրայ կը մտածեմ.
 Քու ձեռքերուդ ըրածներուն վրայ կը խորհիմ:
6 Զեռքեր դէպի քեզ կ'երկնցնեմ.
 Իմ անձս չը երկրի պէս քեզի իւժարուի: (Աէլաւ)
7 Շուտով պատասիսն տուր ինձի, ոլ Տէր.
 Իմ հոգիս մարեցաւ.
 Քու երեսդ մի ծածկեր ինձմէ,
 Որպէս զի գուըը իշնաղներուն պէս շըլլում:
8 Առաջուանց քու ողորմութիւնդ ինձի լսել տուր,
 Վան զի քեզի յուսացայ.
 Իմ երթալու ճամբաս ինձի ցուցուր,
 Վան զի իմ անձս դէպի քեզ կերցուցիս

- 9 Ով Տէր, փրկէ զիս իմ՝ թշնամիներէս,
Վասն զի քեզ իմ՝ ապաւէնս ըլի:
- 10 Սորվեցուր ինձի որ քու կամքդ ընեմ,
Քանզի գուն ես իմ՝ Աստուածուն.
- Թող քու բարի Հոգիդ զիս ուղիղ երկրը առաջնօրդէ:
- 11 Ով Տէր, քու անսուանդ համար կենդանացուր զիս.
Քու արդարութ եանդ համար իմ անձն նեղութ են:
Համէ.
- 12 Եւ քու ողբանութիւնովդ սատկեցուր իմ՝ թշնամիներս,
- Ու կորսնցուր բալոր իմ անձն վշատցնողները,
Վասն զի ես քու ծառադ եմ:

ՍԱՂՄՈՍ ՃԽԴ:

Սուշու Գառթի:

- 1 Օրհնեալ բլազ Տէրը, իմ՝ վէճս,
Որ իմ՝ ձեռքեր մարտնչելու կը վարժէ,
Ու իմ՝ մատերս՝ պատերազմելու:
- 2 Անիկա է իմ՝ ողբանութիւնս ու պարիսպս,
Իմ՝ ապաւէնս ու իմ՝ փրկիչս,
Իմ՝ վաշնաս, և ես անոր կը յաւսամ,
Որ իմ՝ ժողովուրդս ինձի կը հնապանդեցնէ:
- 3 Ով Տէր, մարդը ի՞նչ է որ զանիկա կը ճանչնաս,
Ու մարդու որդին՝ որ զանիկա կը յարգես:
- 4 Մարդը ունայնութեան պէս է,
Անոր օրերը անցնազ շուքի պէս են:
- 5 Ով Տէր, խոնարհեցուր քու երկնքդ ու վար իջիր.
Եւաներուն դպչէ ու պիտի մխան:
- 6 Փոյլակը նետէ ու ցրուէ զանոնք.

- Քու նետերդ զպի ու զանոնք իսովեցուր:
- 7 Քու ձեռքք վերէն զրկէ և ազատէ զիս.
- Փրկէ զիս մեծ ջուրերէն ու օտարներուն ձեռքէն,
- 8 Որսնց բերանը ունայնութիւն կը խօսի,
Եւ անոնց աջ ձեռքքը սառութեան աջ ձեռք է:
- 9 Ով Աստուած, քեզի նոր երգ պիտի երգեմ,
Տար լսր ունեցող տաւիդով սաղման պիտի ըսեմ
քեզի:
- 10 Թագմագոներուն փրկութիւն տուողը,
- Ու իր Գաւիթ ծառան չար սուրէն աղատողը ան է:
- 11 Զիս ազատէ ու օտարներուն ձեռքէն փրկէ,
Որսնց բերանը ունայնութիւն կը խօսի.
Եւ անոնց աջ ձեռքքը սառութեան աջ ձեռք է:
- 12 Որպէս զի մեր որդիները իրենց երիտասարդութեանը
մէջ առնկերու պէս մեծնան,
Ու մեր աղջկները պալատի շէնքին համար փորագ-
րուած անկիւնի քարերու պէս ըլլան.
- 13 Որպէս զի մեր աղբաները լեցուին,
Եւ ամէն տեսակ իբրահիմէն լրդիւն,
Ու մեր պիտիները հազարասոր և բերաւոր ծնանին
մեր արտերուն մէջ.
- 14 Որպէս զի մեր աղջաները * բաղմածին ըլլան,
Ու ամենեւին բռնութեամի մոնել ու ելել ըլլան,
Ոչ ալ աղազակ՝ մեր հրագարակներուն մէջ:
- 15 Երանի՛ այս ժամանակի մէջ եղող ժողովուրդին.
Երանի՛ այս ժողովուրդին՝ որուն Աստուածը Եհովս է:

*կամ, պարարպ

ՍԱԼՄՈՍ ձիս

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԳԻՐԲԻ

- 1 **Փեղ** պիտի բարձրացնեմ, ով իմ Աստուածս, որ թագաւոր ես.
- Ու քու անունդ յաւիտեանս յաւիտենից պիտի օրհնեմ:
- 2 Ամէն օր քեզ պիտի օրհնեմ,
- Եւ քու անունդ յաւիտեանս յաւիտենից պիտի դովեմ:
- 3 **Մեծ** ու խիստ գովելի է Տէրը,
- Ու անոր մեծութիւնը անքննելի է:
- 4 Ազդ ազդի պիտի գովիչ քու գործերդ,
- Եւ քու զօրութիւններդ պիտի պատմէ:
- 5 Քու փառքիդ մեծութեանը վայելչութիւնը
- Ու քու հրաշալի գործերդ պիտի զրուցեմ:
- 6 Եւ քու աշաւոր գործերդ պիտի խօսին,
- Ու ես քու մեծութիւնդ պիտի պատմեմ:
- 7 Քու մեծ բարերարութեանդ յիշատակը պիտի հրատարակեն,
- Եւ քու արդարութիւնովդ պիտի ցնծան:
- 8 Ուղրմած ու գիմած է Տէրը,
- Երկայնամիտ և բազումնզդմ է:
- 9 Տէրը ամենուն բարի է,
- Ու անոր ողբմութիւնները եր բոլոր գործերուն վրաց են:
- 10 Ով Տէր, քու բոլոր գործերդ քեզ պիտի գովեն,
- Եւ քու առւրսերդ քեզ պիտի օրհնեն,
- 11 Քու թագաւորութեանդ փառքը պիտի խօսին,

- Ու քու զօրութիւնդ պիտի պատմեն.
- 12 Որպէս զի անոր զօրաւոր գործերը ու անոր թագաւոր բական փառաւոր մեծութիւնը
 - Մարդոց սրբներուն գիտցնեն;
 - 13 Քու թագաւորութիւնդ յաւիտենոկան թագաւոր բովթիւն է,
 - Ու քու տէրութիւնդ ազգէ մինչև ազգ:
 - 14 Տէրը կը հաստատէ բոլոր իշնալու վրաց եղողները,
 - Եւ բոլոր վար ծռածները կը կանգնեցնէ:
 - 15 Ամէնուն աչքերը քեզի կը սպասեն,
 - Ու ժամանակին անոնց կերակուրը գուն անոնց կուտածաւ:
 - 16 Քու ձեռք-քդ կը բանաս,
 - Ու ամէն կենալանին փափուքը կը լեցնես:
 - 17 Տէրը արդար է իր բոլոր ճամկաներուն մէջ,
 - Ու սղորմած է իր բոլոր գործերուն մէջ:
 - 18 Տէրը մօտ է այն ամէնուն օր զինք կը կանչեն,
 - Այն ամէնուն՝ օր Ճշմարտութեամբ զինք կը կանչեն:
 - 19 Անիկա իրմէ վախցողներուն փափուքը կը լեցնէ,
 - Եւ անոնց աղաղակը կը լսէ ու կը փոկէ զանոնք:
 - 20 Տէրը բոլոր զինք պիտողները կը պահէ,
 - Սակայն բոլոր արդարի շաները կը կորանցնէ,
 - 21 Կմ՛ բերանս Տէրոջը գովլութիւնը պիտի խօսի
 - Ու ամէն մարմին անոր սուրբ անունը օրհնէ յաւիտեանս յաւիտենից:

ՍԱԼՄՈՍ ձիօ

- 1 **Ալէլուիս** Օրհնէ Տէրը, ով իմ անձատ
- 2 Տէրը պիտի օրհնեմ իմ կեանքիս մէջ,

- Քանի որ աղջ եմ՝ իմ Աստուծոյս ասղմաս պիտի ըսեմ։
 3 Մի յաւագի էլքամներուն,
 Մարդու որդիին որուն քով գրկութիւն չկայ։
 4 Անոր հոգին կ'ելլէ, անփառ իր հողը կը գաւանայ։
 Նոյն օրը անոր խորհուրդները կը կորաւինեւ։
 5 Երանի՛ անոր՝ որուն օդանականը Յակոբի Աստ.
 սւածն է,
 Ու անոր յայսը իր Տէր Աստուծոյն վրայ է։
 6 Որ երկինքը ու երկիրը,
 Ծովը ու լուսը անոնց մէջ եղածը առեղծեց
 Ճշմարտութիւն կը պահէ յաւիսեան,
 7 Իրաւունք կ'ընէ զրկուածներուն,
 Ու հաց կու տայ անօթիներուն։
 Տէրը կ'արձակէ կազուածները։
 8 Տէրը կը բանայ կայրերուն աչքերը։
 Տէրը կը կանգնեցնէ վար ծաւածները։
 Տէրը կը միքէ արդարները։
 9 Տէրը կը պահէ պանդուխաները։
 Կը հաստատէ որդը ու որբեւարին,
 Բայց ամեարիշաներուն ճամփան կը ծռէ։
 10 Տէրը պիտի թագաւորէ յաւիսեան,
 Քու Աստուծոդ, ով Սիօն, ազգէ մինչև ազգ։ Ալէ-
 լուիսա

ԱՍԼԱՄՈՍ ՃԽԵ

- 1 Փովեցէք Տէրը, վասն զի բարի է մեր Աստուծոյն
 ասղմաս ըսել։
 Վասն զի քայլը ու վայելուշ է օրհնութիւնը։
 2 Տէրը կը շնէ Երուասողէմը,
 Խրայէի ցրուածները կը ժողվէ։

- 3 Արտով կոտրածները կը բժշկէ,
 Ու անոնց խոցերը կը փաթթիէ.
 4 Ասողելաւն թիւը կը համրէ,
 Անոնց ամէնն ալ էրեւ անուններովը կը կանչէ։
 5 Մեծ է մեր Տէրը, ու իր զօրութիւնը շատ է.
 Անոր իմաստութիւնը անհուն է։
 6 Տէրը կը հաստատէ խեղճերը,
 Ու ամբարիշաները մինչև հողը կը խոնարհեցնէ։
 7 Երգեցէք Տէրոյն գոհաւթիւնով։
 Մէր Աստուծոյն ասղմաս ըսէք քնարով։
 8 Որ երկինքը ամպերով կը ծած կէ,
 Անձրէ կը պատրաստէ երկրի համար,
 Խոտ կը բուացնէ լեռներուն վրայ։
 9 Որ անսատուններուն իրենց կերակուը կու տայ,
 Ու ագռաւին ձագերուն՝ որոնք կ'աղողակեն։
 10 Անիկա ձիուն զօրութեանը չհաւճիր,
 Մարդուն օրուններուն չհաւճիր։
 11 Տէրը կը հանի իրմէ վախցողներուն
 Ու իր ողորմութեանը յուսացողներուն։
 12 *Ով կրասաղէմ, գովէ Տէրը.
 Օրհնէ քու Աստուծոդ, ով Սիօն։
 13 Վասն զի անփառ քու գուներուդ նիգերը ամուրցուց,
 Եւ քու որդիներդ քու մէջդ օրհնեց։
 14 Անիկա քու սահմաններուդ խաղաղութիւն կու տայ,
 Ու պարարտ ցորենով քեզ կը կշուղնէ։
 15 Անիկա իր խօսքը երկրին մէջ կը դրէ.

*Եօնաւանից և Հայոց գրաբար նորդանութեանց մէջ
 ասէի հաւաք Հանէ. Սուլուսը Տէս Սաղման Ժ. Ի. Գրայէ
 Հանօնութեաւը,

- Եր խօսքը շուտամշ կը վաղէ։
 16 Անիկա բուրդի պէտ ծիւն կու տայ,
 Ու եղեամը մնիբիրի պէտ կը ցանէ։
 17 Եր սառը գտատաներու պէտ կը նետէ.
 Անոր ցուրտին գէմ ո՞վ կրնայ կենալ։
 18 Անիկա իր խօսքը կը դրէկ ու կը հակեցնէ զանանք.
 Եր հովք ժեւել կու տայ, ու ջուրեր կը վաղեն։
 19 Անիկա իր խօսքը կը պատմէ Յակոբի,
 Եւ իր կանոնները ու դատասառները՝ Խորացէի։
 20 Բնութ աղդի մը այսպէս չըրտ
 Ու անոնք անոր դատասառները չճանչցան։ Ալէլուիս

ՍԱՂՄՈՍ ՃԽԸ

- 1 Ալէլուիս Օրչնեցէք Տէրը երկնաբէն.
 Օրչնեցէք զանիկա բուրձը տեղերուն մէջ,
 2 Օրչնեցէք զանիկա, ով անոր բուլոր հրեշտակները.
 Օրչնեցէք զանիկա, ով անոր բուլոր զօրբերը
 3 Օրչնեցէք զանիկա, ով արեգակ ու լուսին.
 Օրչնեցէք զանիկա, ով բուլոր փայլուն աստղեր։
 4 Օրչնեցէք զանիկա, ով երկնից երկնիք
 Ու երկինք վեր եղող ջուրեր։
 5 Թող Տէրողը անունը օրչնեն.
 Վասն զի ինք հրամայեց, ու անոնք ստեղծուեցան։
 6 Եւ զանոնք յաւրահետն յաւրատենից հաստատեց.
 Կանոն դրտ որ չխափանուիր։
 7 Օրչնեցէք Տէրը երկրէ,
 Ով միշապներ ու բուլոր անդունդներ։
 8 Կրտպ և կարկուտ, ձիւն ու շոգի,
 Եւ անոր խօսքը կատարող մըրկարից հոյ,

- 9 Լեռներ ու բալոր բլուկներ,
 Պաղասառ ծառեր ու եղեւիններ,
 10 Գաղաններ ու բոլոր անասուններ,
 Սուլցաղներ ու թեւաւոր թաշուններ,
 11 Երկիր թագաւորներ և բոլոր ազգեր,
 Իշխաններ ու երկիր բոլոր դատաւորներ,
 12 Երկոսսարդներ և կյս աղջիկներ,
 Ծերեր ու տղամբներ,
 13 Թող Տէրողը անունը օրչնեն,
 Վասն զի միայն անոր անունը բարձր է,
 Անոր փառքը երկրէ ու երկնիք վեր է,
 14 Անիկա բորձացուց իր ժողովաւրդին եղջիւքը,
 Եր բոլոր սուրբերուն,
 Երեն մօտ եղող ժողովուրդին,
 Խորացէլի որդիներուն օրչնութիւնը Ալէլուիս

ՍԱՂՄՈՍ ՃԽԸ

- 1 Ալէլուիս Տէրողը նոր երգ երգեցէք,
 Ու անոր օրչնութիւնը սուրբերուն ժողովքին մէջ։
 2 Խորացէլ Թողը ուրախանայ իր Սաեղծողին վրայ.
 Սիօնի որդիները թող ցնծան իրենց Թագաւորին վրայ։
 3 Թող անոր անունը պարող օրչնեն,
 Թմբուկավ ու քնարով ասզման թող լսեն անոր։
 4 Վասն զի Տէրը իր ժողովաւրդին կը հուսնի,
 Խոնարչները փրկութիւնով պիտի փառաւորէ։
 5 Թող սուրբերը ուրախանան փառքով,
 Ու իրենց անկողիններուն մէջ ցնծան,
 6 Աստուծոյ գովութիւնները անոնց բերնին մէջ թող

ՇԱՄԱՆ

- Ու երկու բերնով սուր՝ անմաց ձեռքին մէջ,
 7 Որպէս զի հեթ անսաներէն վրէժ տանեն,
 Ու ժողովուրդները պատժեն,
 8 Որպէս զի անմաց թագաւորները շղթաներով կտպեն,
 Ու անմաց ազնուականները՝ երկալը է կապտանքներով,
 9 Որպէս զի գրուած գաստառանը անմաց վրայ կա-
 տարեն:
 Այս անոր բոլոր սուրբերուն փառքն է: Ալէլուիա:

ՍՈԼՄՈՍ ՃԾ

- 1 Ալէլուիա Օրհնեցէք զԱստուած իր սրբարանին
 մէջ.
 Օրհնեցէք զանիկա իր զօրսւթեանը հաստատութեանը
 մէջ:
 2 Օրհնեցէք զանիկա իր զօրսւոր գործ երուն համար.
 Օրհնեցէք զանիկա իր մեծ ափասութեանը համեմատ:
 3 Օրհնեցէք զանիկա փողի ձայնով.
 Օրհնեցէք զանիկա տառիզով ու քնարով:
 4 Օրհնեցէք զանիկա թմրուկով ու պարով.
 Օրհնեցէք զանիկա լար ունեցող նուազարաններով
 ու սրինգով:
 5 Օրհնեցէք զանիկա մեծաձայն ծնծզաններով.
 Օրհնեցէք զանիկա ցնծութեան ծնծզաններով:
 6 Ամէն շաւնչ սննեցող թող Տէրը օրհնէ: Ալէլուիա:
-



